

«ԿԱՆԱԶ» ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՌԵԵՍՏՐ-ԳՈՐԾԻՔ

Մարդու հիմնարար «կանաչ» իրավունքները						
	Իրավունքի խախտումները	Համայնք	Հղումներ օրենսդրությանը	Պատասխանատու մարմին	Կանաչ իրավունքների պաշտպանության և ուղղված գործողություններ	Արդյունքներ
1.	<p>Առողջության և առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը</p> <p>➤ Մարդու առողջության պահպանության պահանջներ</p>		<p><u>ՀՀ Սահմանադրություն</u> Հոդված 3. 1. Հայաստանի Հանրապետությունում մարդը քարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: 3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական</p>	<p>➤ <u>ՀՀ կառավարություն</u> ➤ <u>ՀՀ Ազգային ժողով</u> ➤ <u>Առողջապահության նախարարություն</u> ➤ <u>Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն</u> ➤ <u>Բնապահպանության նախարարություն</u> ➤ <u>Արտակարգ իրավիճակների նախարարություն</u> ➤ <u>Արդարադատության նախարարություն</u> ➤ <u>Գյուղատնտեսության նախարարություն</u></p>		

իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Հոդված 12.

1. Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: 2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք

Հոդված 10.

Քաղաքացիներն ունեն՝ 1) բարենպաստ շրջակա միջավայրի և սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավունք:

Հոդված 23.

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում պետական մարմինների կողմից հատուկ կարևորության խնդիրների

- [Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն](#)
- [Մշակույթի նախարարություն](#)
- [Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն](#)
- [Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն](#)
- [ՀՀ Ջրային տնտեսության պետական կոմիտե](#)
- Տեղական ինքնակառավարման մարմիններ
- Տնտեսվարող սուբյեկտներ

վերաբերյալ որոշումներ կարող են կայացվել միայն Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մասնագիտական փորձաքննության տվյալների հիման վրա տրված դրական եզրակացության առկայության դեպքում:

Պարտադիր սանիտարահիգիենիկ փորձաքննություն է իրականացվում ատոմային էներգետիկայի, շրջակա միջավայրում քիմիական և կենսաբանական արտանետումներ և հոսքեր ունեցող օբյեկտների, ինչպես նաև էկոլոգիական աղետի կարգավիճակ ունեցող գոտիներում օբյեկտների տեղաբաշխման, վերակառուցման և ընդունման, նախադեպ չունեցող նոր տեխնոլոգիաների ներդրման և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Սանիտարահիգիենիկ փորձաքննություն է իրականացվում նաև պետական մարմինների հանձնարարությամբ, Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության նախաձեռնությամբ, ինչպես նաև հասարակական, հասարակական-քաղաքական

կազմակերպությունների, բնակչության կողմից բարձրացված սանիտարահամաճարակային, անվտանգության ապահովման հետ կապված հարցերի կապակցությամբ: [Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք](#) Հոդված 5.

1. Գնահատումը և փորձաքննությունը ելնում են՝

1) առողջության, բնական ապրելու և ստեղծագործելու համար բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքից.

2) բնական պաշարների արդյունավետ, համալիր և բանական օգտագործման պահանջներից.

3) էկոլոգիական համակարգերի հավասարակշռության և կենդանական ու բուսական աշխարհի պահպանման անհրաժեշտությունից՝ նկատի ունենալով ներկա և ապագա սերունդների շահերը.

4) շրջակա միջավայրին և մարդու առողջությանը հասցվող վնասի հատուցելիության ճանաչումից:

2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության սկզբունքներն են՝

1) գործունեության արդյունքում

շրջակա միջավայրի վրա ազդեցության հնարավորության ընդունումը.

2) գնահատման ընթացքում ազդեցությունների, ներառյալ՝ անդրսահմանային, համալիր դիտարկումը.

3) նախատեսվող գործունեության իրականացման այլընտրանքային, այդ թվում՝ գրոյական (գործունեության իրականացման բացառում) տարբերակների դիտարկումը.

4) հաշվետվությունների լիարժեքության, հավաստիության և գիտական հիմնավորվածության ապահովումը.

5) փորձաքննական եզրակացության հիմնավորվածության, օրինականության, օբյեկտիվության ապահովումը.

6) **գնահատման և փորձաքննության գործընթացների թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.**

7) **գնահատման և փորձաքննության գործընթացում հանրության մասնակցության ապահովումը.**

8) **ձեռնարկողի կողմից շրջակա միջավայրին հասցված վնասի**

հատուցումը:

3. Նախատեսվող գործունեության կամ հիմնադրության փաստաթղթի գործողության հետևանքով մարդու առողջության կամ շրջակա միջավայրի վրա հնարավոր ռիսկի դեպքում պատասխանատվությունը կրում է ձեռնարկողը, եթե տվյալ գործունեության վնասակարության բացակայությունը գիտականորեն հիմնավորված չէ:

Հոդված 7.

1. Գնահատման և փորձաքննության իրականացման ընթացքում դիտարկվում են՝

1) **մթնոլորտային օդի** որակական և քանակական ցուցանիշները, մթնոլորտն աղտոտող նյութերը, աղտոտվածության մակարդակը.

2) **մակերևութային և ստորերկրյա ջրերը**, դրանց կատեգորիան, հոսքի ռեժիմը, որակական և քանակական ցուցանիշները, ջրօգտագործումը, ջրահեռացումը, ջրային համակարգը կամ դրա առանձին մասերը և այլ բնութագրերը.

3) **հողը`** նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը, կարգը, որակը, վիճակը, կազմը, աղտոտվածությունը,

դեգրադացիան, բերրի շերտի
օգտագործումը, հողերի այլ
բնութագրեր.

4) **երկրաբանական
կառուցվածքը**, գոյացությունները,
օգտակար հանածոները, ընդերքի
պահպանությանն ու
օգտագործմանը վերաբերող այլ
բնութագրեր.

5) **ռելիեֆը, լանդշաֆտը,
բնության հատուկ պահպանվող
տարածքները**, բնակավայրերի
կանաչ գոտիները, միգրացիոն
գոտիները և ուղիները.

6) **բուսական ու կենդանական
աշխարհը**, դրանց տեսակային
կազմը և գոյության պայմանները,
բուսական ու կենդանական
աշխարհի օբյեկտների
օգտագործումը, կենդանի
վերափոխված օրգանիզմների
գործածությունը, Հայաստանի
Հանրապետության կենդանիների
կամ Հայաստանի Հանրապետության
բույսերի կարմիր գրքերում
գրանցված կենդանիների, բույսերի
առկայությունը.

7) **անտառները`** գործառնական
նշանակությունը, տեսակային
կազմը, վիճակը և անտառի այլ
բնութագրեր.

8) **կառույցները, պատմության և
մշակույթի հուշարձանները.**

9) թափոնների կազմը, վտանգավորության աստիճանը, ծավալը, օգտագործումը, վերամշակումը, տեղափոխումը, վնասագերծումը, պահեստավորումը, թաղումը, պահումը, պահպանումը.

10) ֆիզիկական ազդեցությունները՝ աղմուկը, տատանումները, իոնացնող և ոչ իոնացնող ճառագայթումները.

11) ազդեցությունների հետ կապված առողջապահական գործոնները.

12) սոցիալական գործոնները, ժողովրդագրական կազմն ու բնակչությունը.

13) արտակարգ իրավիճակների հավանականությունը:

[ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք](#)

Հոդված 5.

1. Ընդերքի տեղամասերն օգտագործման են տրամադրվում ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի պահպանության և մարդկանց կյանքի ու առողջության պաշտպանության հետ կապված օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման պայմանով:

Հոդված 60.1.

1. Ընդերքօգտագործման

թափոնների կառավարումը և վերամշակումն իրականացվում են՝

- 1) վնաս չպատճառելով մարդկանց առողջությանը.
- 2) կիրառելով այնպիսի գործընթացներ կամ տեխնոլոգիաներ, որոնք նվազագույնի կհասցնեն շրջակա միջավայրին՝ ջրին, մթնոլորտային օդին, հողին, կենդանական և բուսական աշխարհին պատճառվող վնասը.
- 3) հնարավորինս նվազագույնի հասցնելով լանդշաֆտի կամ հատուկ նշանակության վայրերի՝ պատմամշակութային, էթնոգրաֆիկ, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական ազդեցությունը:

2. Ընդերքօգտագործողները հանքի շահագործման ընթացքում և հանքի փակումից հետո պարտավոր են իրականացնել ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումներ՝ շրջակա միջավայրին կամ մարդկանց առողջությանը հասցվող վնասի և վթարների կանխարգելման կամ

		<p>նվազագույնի հասցնելու նպատակով:</p> <p>3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված միջոցառումները պետք է իրականացվեն առկա լավագույն տեխնոլոգիայի կամ բնապահպանական իմաստով լավագույն տնտեսական գործունեության կիրառմամբ՝ հաշվի առնելով ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման օբյեկտների տեխնիկական առանձնահատկությունները, աշխարհագրական դիրքը և բնապահպանական պայմանները:</p>			
	<p>➤ Մթնոլորտային օդի պահպանության պահանջներ</p>	<p><u>«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք</u> Հոդված 10.</p> <p>«Մթնոլորտային օդի վիճակը գնահատելու համար սահմանվում են մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվներ:</p> <p>Այդ նորմատիվները պետք է համապատասխանեն բնության պահպանության ու մարդկանց առողջության շահերին:</p> <p>Հոդված 15.</p>			

Ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները, որոնց գործունեությունը կապված է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների հետ, պարտավոր են տեխնիկական, տնտեսական, կազմակերպական և այլ կարգի միջոցառումներ իրականացնել արտանետման թույլտվություններում նախատեսված պայմանների և պահանջների կատարումն ապահովելու համար, միջոցներ ձեռնարկել աղտոտող նյութերի արտանետումները նվազեցնելու ուղղությամբ, ապահովել բնապահպան կառույցների, սարքավորումների սարքիչությունը, դրանց անընդմեջ և արդյունավետ աշխատանքը, հետևողականորեն բարելավել տեխնոլոգիական պրոցեսները՝ ներդնելով լավագույն հասանելի տեխնոլոգիաներ, ինչպես նաև սահմանված կարգով իրականացնել մթնոլորտային օդ արտանետվող նյութերի քանակի և բաղադրության մշտական հաշվառում և չափումներ:

Մթնոլորտային օդի պահպանության միջոցառումների իրականացումը չպետք է հանգեցնի բնության մյուս ոլորտների աղտոտմանը:

Հոդված 21.

«Նոր և վերակառուցված ձեռնարկությունների, կառույցների և այլ օբյեկտների տեղաբաշխման, նախագծման, կառուցման և գործարկման, գոյություն ունեցող տեխնոլոգիական գործընթացների և սարքավորումների կատարելագործման ու նորերի ներդրման դեպքում անհրաժեշտ է ապահովել մթնոլորտային օդի վիճակի վրա վնասակար ներգործության նորմատիվների պահպանումն ու նվազեցումը: Ընդ որում, պետք է նախատեսվեն վնասակար նյութերի և արտանետումների որսումը, օգտահանումը, վնասազերծումը կամ մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետման լիակատար բացառումը, մթնոլորտային օդի պահպանության մյուս պահանջների կատարումը, ելնելով այն բանից, որ նախագծվող, գործող և ապագայում կառուցվող ձեռնարկությունների, կառույցների և այլ օբյեկտների արտանետումները, ինչպես նաև ֆիզիկական վնասակար ներգործությունները միասին չհանգեցնեն մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների նորմատիվների և մթնոլորտային օդի վրա ֆիզիկական վնասակար

ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվների գերազանցմանը:

Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվող (վերակառուցվող, քանդվող) օբյեկտների շինարարության ընթացքում փոշու արտանետումների՝ շինարարական հրապարակից դուրս տարածվելը կանխարգելելու նպատակով շինարարություն, ինչպես նաև փոշու արտանետման հետ կապված աշխատանքներ իրականացնող կազմակերպությունները և քաղաքացիները դրանք իրականացնելու ընթացքում պարտավոր են՝

ա) պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով.

բ) շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը լվանալ.

գ) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, սորուն նյութերը և շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներ ունեցող

մեքենաներով.

դ) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս.

ե) հղկման աշխատանքներ իրականացնելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ.

զ) սորուն նյութերը (ավազ, գաջ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.

է) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

Արգելվում է այրել խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում:»:

Արգելվում է կենցաղային և

արտադրական աղբը, ինչպես նաև տերևաթափից առաջացած թափոններն այրել բնական միջավայրում, բնակավայրերում, նրանց շրջակայքում ու դրանց այրման համար չնախատեսված կաթսայատներում, վառարաններում և այլ սարքերում:

Հոդված 22.

Մթնոլորտային օդի վիճակի վրա ներգործող նոր ձեռնարկությունների, կառույցների և այլ օբյեկտների տեղի ընտրության, գործող ձեռնարկությունների, կառույցների և այլ օբյեկտների վերակառուցման կամ ընդլայնման դեպքում նախատեսվում է սանիտարապաշտպանական գոտիների ստեղծում:

Հոդված 23.

Արգելվում է մթնոլորտային օդի պահպանության պահանջները չբավարարող նոր և վերակառուցվող ձեռնարկությունների, կառույցների և այլ օբյեկտների շահագործման հանձնումը:

Հոդված 31.

Արգելվում է բնակավայրերում տերրիկոնների, հանքակույտերի և լցակույտերի տեղափոխումը, արդյունաբերական թափոնների, արտադրական, կենցաղային աղբի և մթնոլորտային օդը փոշով,

վնասակար գազերով և գարշահոտ նյութերով աղտոտելու աղբյուր հանդիսացող այլ թափոնների պահեստավորումը, ինչպես նաև ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և բնակավայրերի տարածքներում նշված թափոնների այրումը:

Հոդված 41.

Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենսդրությունը խախտողները ենթակա են **նյութական, վարչական ու քրեական պատասխանատվության.**

- մթնոլորտային օդի պահպանության բնագավառում անհրաժեշտ հսկողություն և վերահսկողություն չապահովելու,

- մթնոլորտային օդի պահպանության միջոցառումները իրականացնելիս հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների մասնակցությունը խոչընդոտելու,

- մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների գերազանցման,

- մթնոլորտային օդն աղտոտող ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվների մակարդակների գերազանցման և

թույլություններով նախատեսված պայմանների և պահանջների խախտման,

- առանց մթնոլորտային օդի պահպանության բնագավառում լիազոր մարմինների թույլտվության մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետման,

- մթնոլորտային օդն աղտոտող արտանետումների մաքրման և հսկողության համար տեղակայված կառույցների, սարքավորումների շահագործման կանոնները խախտելու, ինչպես նաև դրանք չունենալու և չօգտագործելու,

- մթնոլորտային օդի պահպանության պահանջները չբավարարող կառույցներ և այլ օբյեկտներ կառուցելու և շահագործելու,

-ավտոտրանսպորտային միջոցների, ինքնաթիռների, նավերի, այլ փոխադրամիջոցների ու կայանքների արտադրության ու շահագործման համար, որոնց արտանետումների մեջ մթնոլորտային օդն աղտոտող նյութերի պարունակությունը գերազանցում է սահմանված նորմատիվները,

- մթնոլորտային օդի պահպանության բնագավառում պետական վերահսկողությունը

խոչընդոտելու, ինչպես նաև այդ
բնագավառին վերաբերող
տվյալները կեղծելու կամ
չներկայացնելու,

- այնպիսի
հայտնագործությունների, գյուտերի,
ռացիոնալիզատորական
առաջարկությունների, նոր
տեխնիկական համակարգերի,
առարկաների և նյութերի ներդրման,
ինչպես նաև արտասահմանյան
երկրներից այնպիսի
տեխնոլոգիական սարքավորումներ
և այլ օբյեկտներ ձեռք բերելու
համար, որոնք չեն բավարարում
մթնոլորտային օդի պահպանության
վերաբերյալ Հայաստանի
Հանրապետությունում սահմանված
պահանջները և ապահովված չեն
մթնոլորտային օդ կատարվող
արտանետումների վերահսկման
տեխնոլոգիական միջոցներով,

- արդյունաբերական և
կենցաղային թափոնների
պահեստավորման, բույսերի
պաշտպանության միջոցների,
դրանց աճի խթանիչների, քիմիական
նյութերի, հանքային
պարարտանյութերի և այլ
պատրաստուկների արտադրության,
փոխադրման, պահպանության ու
կիրառման կանոնները խախտելու
համար, որոնք առաջ են բերել կամ

		<p>կարող են առաջ բերել մթնոլորտային օդի աղտոտում,</p> <ul style="list-style-type: none"> - մթնոլորտային օդի պահպանության պետական վերահսկողություն իրականացնող մարմինների կարգադրերը չկատարելու, -աղտոտման պատճառով սահմանված վարձերը չվճարելու, - բնակավայրերում արդյունաբերական թափոնների, արտադրական, կենցաղային աղբի և մթնոլորտը փոշով, վնասակար գազերով ու զարշահոտ նյութերով աղտոտելու աղբյուր հանդիսացող թափոնների պահեստավորման կամ դրանց այրման, - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ խախտումների համար: 			
	<p>➤ ջրերի պահպանության պահանջներ</p>	<p><u>ՀՀ Ջրային օրենսգիրք</u> Հոդված 67. Ջրերի ստանդարտները խախտելու դեպքում ջրօգտագործումը համարվում է անօրինական և դրան կատարմամբ կիրառվում է օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն: Եթե ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված են դրույթներ, որոնք թույլատրում են ջրերի ստանդարտներից շեղումներ</p>			

և կարող են հանգեցնել գումարային ազդեցության, ապա այդ թույլտվությունները համարվում են չեղյալ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 98.

Ջրերի քանակի և որակի բարելավման, ինչպես նաև հողի, օդի, կենսաբազմազանության և ջրերի միջև փոխհարաբերությունները պահպանելու նպատակով փոխկապակցված էկոլոգիական համակարգերը և լանդշաֆտները ենթակա են պահպանման:

Ջրային ռեսուրսներին հարակից հողերի սեփականատերը կամ օգտագործողը պարտավոր է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել կանխելու ջրային ռեսուրսի հետ կապված էկոլոգիական համակարգին սպառնացող վտանգը:

Հոդված 99.

Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսները ենթակա են պահպանության:

Ջրային ռեսուրսի պահպանության հիմնական պահանջներն են՝

- 1) ջրային ռեսուրսի օգտագործումը թույլատրվում է միայն դրա պահպանության և վերարտադրության պայմաններում.

2) ջրային ռեսուրսն էկոհամակարգերի և բնական լանդշաֆտների բաղկացուցիչ մասն է, և դրա պահպանությունը պայմանավորված է տվյալ էկոհամակարգի հավասարակշռությամբ.

3) ջրային ռեսուրսը ենթակա է պահպանության ինչպես օգտագործման, այնպես էլ չօգտագործման դեպքերում.

4) ջրային ռեսուրսի չօգտագործման դեպքում դրա պահպանությունը պետք է ապահովի տվյալ էկոհամակարգի հավասարակշռությունը և բարեկեցությունը ջրերի մասով՝ ամբողջությամբ.

5) ջրային ռեսուրսի օգտագործման դեպքում դրա պահպանությունը պետք է ապահովի տվյալ էկոհամակարգի հավասարակշռությունը.

6) ջրային ռեսուրսը ենթակա է պահպանության ադոտումից, ադրոտումից, վարակումից և հյուծումից.

7) կեղտաջրերի արտահոսքը ջրային ռեսուրս թույլատրվում է միայն սույն օրենսգրքի պահանջների համաձայն՝ արտահոսքի թույլտվության առկայության դեպքում.

8) ջրային ռեսուրսի ակվատորիայի կամ ջրապահպան գոտու տարածքում արգելվում է կատարել որևէ տեսակի աշխատանք, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

9) ստորերկրյա ջրերի պահպանման գոտիներում սահմանափակվում կամ արգելվում են գործունեության որոշակի տեսակներ (ներառյալ՝ հողերի ռոտզումը կեղտաջրերով)՝ լուծիչներ կամ քիմիկատներ արտադրող, օգտագործող կամ պահող արդյունաբերական կամ առևտրային կազմակերպությունների գործունեությունը, տնտեսական գործունեության ընթացքում առաջացող հումքի, նյութերի, կիսաֆաբրիկատների, այլ արտադրանքների և մթերքների մնացորդների աղբանոցների տեղադրումը.

10) հետախուզական, օգտագործման համար ոչ պիտանի, ճնշումային, ընդհատված օգտագործմամբ հորատանցքերը ենթակա են կոնսերվացման կամ վերացման.

11) արգելվում է ռադիոակտիվ և թունավոր թափոնների արտանետումը, արտահոսքը և

թաղումը ջրային ռեսուրսում, ինչպես նաև պայթեցման աշխատանքների իրականացումը միջուկային և այլ տիպի տեխնոլոգիաներով, որոնք ընթանում են ռադիոակտիվ և թունավոր նյութերի արտանետմամբ: Սույն հոդվածի պահանջների խախտման դեպքում սահմանափակվում, դադարեցվում կամ արգելվում է ջրային ռեսուրսի օգտագործումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 104.

Կեղտաջրերը և ցամաքուրդային ջրերն ընդունելու համար արգելվում է օգտագործել ջրային այն ռեսուրսը կամ դրա մասը, որը՝

- 1) պարունակում է բնական բուժիչ ռեսուրսներ.
- 2) գտնվում է առանձնահատուկ պահպանվող ավազանային տարածքների կազմում.
- 3) գտնվում է առողջարանների, զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն նպատակներով օգտագործվող վայրերի հարևանությամբ.
- 4) հանդիսանում է արժեքավոր տեսակի ձկների ձվադրման և ձմեռման վայր.
- 5) հանդիսանում է արժեքավոր կենդանիների բնակավայր կամ

բույսերի աճման տեղամաս:

Կեղտաջրերը և ցամաքուրդային ջրերն ընդունելու համար արգելվում է կլանող հորատանցքերի և ջրհորների կառուցումը:

Կեղտաջրերը և ցամաքուրդային ջրերը հանձնվում են ջրահեռացման համակարգ՝ ջրահեռացման պայմանագրով սահմանված կարգով:

[ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք](#)

Հոդված 67.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ստորերկրյա ջրերի հանքավայրերն ու ջրատար հորիզոններն աղտոտումից զերծ պահելու և պահպանությունն ապահովելու նպատակով ջրհանների ու աղբյուրների շուրջը ստեղծվում են սանիտարական պահպանման գոտիներ, որոնց սահմաններում իրագործվում են հողի, ջրի, մթնոլորտի և կանաչապատ տարածքների հնարավոր աղտոտումը և հողի դեգրադացումը բացառող միջոցառումներ:

2. Սանիտարական պահպանման գոտիների նախագծումը կատարվում է բնապահպանական պահանջների (հիդրոերկրաբանական,

		<p>հիդրոլոգիական և սանիտարական նորմերի) հիման վրա, որոնք հանքավայրի և ջրատար հորիզոնի շահագործման և ջրամատակարարման նախագծի անբաժանելի մասն են և համաձայնեցվում են լիազոր մարմնի հետ:</p> <p>3. Ընդերքօգտագործողը սանիտարական գոտիների սահմաններում ունի գործունեության բացառիկ իրավունք և յուրաքանչյուր գործունեություն այլ անձի կողմից կարող է իրականացվել միայն ընդերքօգտագործողի համաձայնությամբ:</p>			
<p>➤ հողի պահպանության պահանջներ</p>		<p>ՀՀ Հողային օրենսգիրք Հոդված 8.</p> <p>1. Հողամասի թույլատրված օգտագործումը հողամասի օգտագործումն է դրա նպատակային և գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքները և սահմանափակումները:</p> <p>Հողամասի թույլատրված օգտագործումը սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի, հողերի օգտագործման սխեմաների, հողաշինարարական այլ փաստաթղթերի, գլխավոր հատակագծերի ու</p>			

քաղաքաշինական գոտիավորման նախագծերի հիման վրա:

2. Հողամասի թույլատրված օգտագործումը կարող է պարունակել պահանջներ, որոնք ուղղված են՝

1) հողամասի օգտագործման միջոցների և դրանց այն մասի արգելմանը, որոնք հանգեցնում են հողի որակի ու բերրիության անկմանը կամ շրջակա բնական միջավայրի վատթարացմանը.

2) քաղաքաշինական փաստաթղթերին, նորմերին ու կանոններին համապատասխան կառուցապատման խտությանը, շենքի, շինության բարձրությանը և հողամասի վրա ամրակայման առանձնահատկությանը.

3) համապատասխան գոտու կամ հողամասի սահմաններում սոցիալ-մշակութային, կոմունալ-կենցաղային, արտադրական և այլ շենքերի, շինությունների տեղադրմանը.

4) մարդու առողջության վրա վնասակար ազդեցություն թողնող կամ դրա վտանգի մեծացման հետ կապված հողօգտագործման ձևերին.

5) շրջակա բնական միջավայրի վրա ազդեցության թույլատրելի նորմերին.

6) կանաչ տնկարկների

պահպանմանը.

7) հողերի անապատացման, հողատարման, աղտոտման, ճահճացման, աղակալման և այլ երևույթների կանխարգելման միջոցառումների իրականացմանը.

8) հողերի պահպանության և խախտված հողերի վերականգնման միջոցառումների իրականացմանը.

9) հողերի վրա բնապահպանական համակարգերի, սանիտարահիգիենիկ պայմանների ամբողջականության, կենսաբազմազանության պահպանման միջոցառումների ապահովմանը.

10) օրենքներով և պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերով սահմանված գյուղատնտեսական, քաղաքաշինական, բնապահպանական, պատմական և մշակութային արժեքների ու պատմական միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներին:

3. Հողամասի թույլատրված օգտագործման մեջ ներառված պահանջները սահմանվում են՝ անկախ տվյալ հողամասի նկատմամբ իրավունքներից և սեփականության ձևից:

Հոդված 9.

3. Գյուղատնտեսական հողատեսքերը ենթակա են հատուկ պահպանության: Այդ հողերի փոխադրումը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի թույլատրվում է բացառիկ դեպքերում՝ սույն օրենսգրքի 7-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 13.

2. Բնակչության անվտանգության ապահովման ու արտադրական օբյեկտների շահագործման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման նպատակով քաղաքաշինական և հողաշինարարական փաստաթղթերով սահմանվում են գոտիներ, որոնցում սահմանվում է հողերի օգտագործման ու հողամասերի սահմանափակումների հատուկ իրավական ռեժիմ (պահպանական, սանիտարական և այլն), այդ թվում՝ սերվիտուտներ:

Այդ հողերի վրա արգելվում է հատուկ իրավական ռեժիմին հակասող ցանկացած գործունեություն:

Այդ գոտիներում սահմաններում սեփականատերերի հողամասերը չեն վերցվում, բացառությամբ այն դեպքերի, երբ գոտու համար

սահմանված ռեժիմով այդ հողամասերը լիովին հանվում են տնտեսական շրջանառությունից, ինչպես նաև օրենքներով սահմանված դեպքերում:

3. Սանիտարական կամ պահպանական պահանջներին համապատասխան տնտեսական շրջանառությունից հանված հողամասերը տրամադրվում են այն իրավաբանական անձանց և հիմնարկներին, որոնց գործունեությունը պահանջում է սանիտարական գոտիների սահմանման անհրաժեշտություն, կամ դասվում են պահուստային ֆոնդի հողերին:

6. Օգտակար հանածոների արդյունահանման համար հողամասերը տրամադրվում են ընդերքի օգտագործման իրավունք հաստատող փաստաթղթերին համապատասխան:

Ընդերքօգտագործողներին նոր հողամասեր չեն կարող տրամադրվել, եթե նրանց գործունեության արդյունքում նախկինում խախտված հողերը վերականգնման նախագծերին համապատասխան չեն վերականգնվել:

Հոդված 19.

1. Հատուկ պահպանվող

տարածքների հողեր են համարվում գեղագիտական, բնապահպանական, գիտական, պատմական և մշակութային, հանգստյան, առողջարարական և այլ արժեքավոր նշանակություն ունեցող հողամասերը, որոնց համար սահմանված է հատուկ իրավական ռեժիմ: Պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներով լիովին կամ մասնակիորեն այդ հողամասերը կարող են սահմանված կարգով հանվել տնտեսական օգտագործումից և քաղաքացիական շրջանառությունից:

2. Հատուկ պահպանվող տարածքների հողերը, ըստ գործառնական նշանակության, դասակարգվում են՝

1) բնապահպանական.

2) առողջարարական նպատակներով նախատեսված.

3) հանգստի համար նախատեսված.

4) պատմական և մշակութային:

3. Հատուկ պահպանվող տարածքների հողերի առանձնացման, տրամադրման, օգտագործման և պահպանման կարգը սահմանում է կառավարությունը:

4. Հատուկ պահպանվող

տարածքների հողերի սահմանման կարգն ու օգտագործման նկատմամբ սահմանափակումները, իրավական ռեժիմը սահմանվում են օրենքով:

5. Հատուկ պահպանվող տարածքների հողերի վրա դրանց գործառնական նշանակությանը և սահմանված իրավական ռեժիմին հակասող ցանկացած գործունեություն **արգելվում է:**

6. Հատուկ պահպանվող տարածքներում սահմանվում են գոտիներ, որոնցում սահմանվում է հողերի օգտագործման և հողամասերի սահմանափակումների հատուկ իրավական ռեժիմ, այդ թվում՝ սերվիտուտներ: Այդ գոտիների սահմաններում սեփականատերերի հողամասերը չեն վերցվում, բացառությամբ, երբ գոտու համար սահմանված ռեժիմով այդ հողամասերը լիովին հանվում են տնտեսական շրջանառությունից, ինչպես նաև օրենքներով նախատեսված դեպքերում:

Հոդված 20.

1. Բնապահպանական հողեր են համարվում բնական, գիտական, գեղագիտական և հանգստի նշանակություն ունեցող և հատուկ պահպանության նպատակով նախատեսված բնության

հուշարձանների, արգելանոցների, ազգային և ծառաբանական զբոսայգիների ու պարկերի, բուսաբանական այգիների, արգելավայրերի (բացառությամբ՝ որսորդական) հողերը:

2. Բնապահպանական հողերում արգելվում է բնական համալիրների ու օբյեկտների պահպանման և հետազոտման հետ չկապված ու օրենքով չնախատեսված որևէ գործունեություն:

Բնապահպանական հողերի օտարումը դրանց նպատակային և գործառնական նշանակությանը հակասող նպատակների համար արգելվում է:

3. Այն կազմակերպությունները և հիմնարկները, որոնց տրամադրվում են օգտագործման հատուկ պայմաններով հողամասեր, պարտավոր են նշաններ տեղադրել դրանց սահմաններին:

Հոդված 21.

1. Առողջարարական նպատակներով նախատեսված հողեր են համարվում բնական, բուժական պաշարներով (հանքային ջրերով, բուժիչ ցեխերով և այլն), բարենպաստ կլիմայով և այլ բնական գործոններով ու պայմաններով օժտված բուժական-առողջարարական վայրերի և առողջարանների հողամասերը,

որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել հիվանդությունների կանխարգելման և բուժման համար:

2. Բուժական-առողջարարական վայրերի և առողջարանների տարածքներում բնակչության հիվանդությունների կանխարգելման ու բուժման կազմակերպման համար բարենպաստ սանիտարական և բնապահպան պահանջներն ապահովելու նպատակով օրենսդրությանը համապատասխան սահմանվում են սանիտարական (լեռնային սանիտարական) պահպանության գոտիներ:

3. Սանիտարական գոտիների սահմաններում սեփականատերերի, օգտագործողների իրավունքները չեն դադարում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հոդված 22.

1. Հանգստի համար նախատեսված հողեր են համարվում բնակչության հանգստի կազմակերպման, զբոսաշրջության, ֆիզիկական դաստիարակության և սպորտային գործունեության կազմակերպման համար նախատեսված ու օգտագործվող հողամասերը:

2. Հանգստի համար նախատեսված հողերի կազմի մեջ են մտնում հանգստյան տներով,

պանսիոնատներով, ֆիզիկական դաստիարակության և սպորտի օբյեկտներով, զբոսաշրջության բազաներով, մշտական ու վրանային, ձկնորսական և որսորդական տնակներով, մանկական զբոսաշրջիկ կայաններով, զբոսաշրջիկ պարկերով, անտառապարկերով, ուսումնազբոսաշրջային արահետներով, մանկական ու սպորտային ճամբարների տեղանշված անցուղիներով և նմանօրինակ այլ օբյեկտներով զբաղեցված հողամասերը:

3. Հողամասերի այն հատվածները, որոնցով անցնում են ուսումնազբոսաշրջային արահետները և տեղանշված անցուղիները, առանձնացվում են դրանց սեփականատերերի, օգտագործողների համաձայնությամբ՝ որպես սերվիտուտ և օգտագործվում են սերվիտուտի կարգավիճակով:

4. Հանգստի հողերում **արգելվում է** դրանց ըստ նպատակային նշանակությամբ օգտագործելուն խոչընդոտող գործունեությունը:

Հոդված 23.

1. Պատմական և մշակութային հողեր են համարվում պատմական և մշակութային արժեքների ու

պատմական միջավայրի
պահպանության,
հուշագրոսայգիների,
հուշահամալիրների, հնագիտական
ու ճարտարապետական
հուշարձանների, այդ թվում՝
պաշտամունքային կառույցների,
պատմական և մշակութային
արգելանոցների ու արգելավայրերի,
պատմության, մշակույթի ու
հնագիտական օբյեկտների,
պետական գերեզմանատների,
դամբարանադաշտերի և
պատմական ու մշակութային այլ
արժեքներով զբաղեցված
հողամասերը:

Պատմական և մշակութային
օբյեկտների տեսողական,
լանդշաֆտային, պատմական ու
քաղաքաշինական միջավայրի
պահպանության նպատակով
օրենսդրությանը համապատասխան
ստեղծվում են պահպանական
գոտիներ, որոնց սահմանները
տեղանքում առանձնացվում են
հատուկ նշաններով: Պատմական և
մշակութային նշանակության
հողամասերի օգտագործման և
պահպանության գոտիները
սահմանվում են օրենքներով և այլ
նորմատիվ իրավական ակտերով ու
արտահայտվում են
քաղաքաշինական և

հողաշինարարական
փաստաթղթերում:
2. Պատմական և մշակութային
հողամասերի վրա **արգելվում է**
դրանց նպատակային ու
գործառնական նշանակությանը
հակասող ցանկացած
գործունեություն:

Հոդված 36.

1. Հողերի պահպանությունը
բնապահպանական, տնտեսական,
կազմակերպական, իրավական և այլ
միջոցառումների համակարգ է՝
ուղղված հողերի նպատակային ու
արդյունավետ օգտագործմանը,
դրանց օգտագործման
սահմանափակումների
պահպանմանը, գյուղատնտեսական
շրջանառությունից հողերի անհիմն
բացառմանը, ջրային և հողմային
հողատարումից, ճահճացումից,
աղակալումից պահպանմանը,
հողերի բերրիության
վերականգնմանն ու բարձրացմանը:

2. Հողերի պահպանության
ինդիքներն են՝

1) հողերի բերրիության, ինչպես նաև
հողի այլ օգտակար
հատկությունների պահպանումը,
բարելավումը և արդյունավետ
օգտագործումը.

2) խախտված հողերի
վերականգնումը, դրանք

տնտեսական շրջանառության մեջ ներառումը.

3) հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանումը, պահպանումը և օգտագործումը.

4) հողերը ջրային և հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, կրկնակի աղակալումից, կարծրացումից, արտադրական և կենցաղային թափոններով, քիմիական և ռադիոակտիվ նյութերով աղտոտումից, սողանքներից, անապատացումից, հողի վիճակը վատթարացնող այլ ազդեցություններից պահպանումը.

5) մանրէամակաբուծային ու կարանտինային վնասատուների վարակումներից, մոլախոտերից, թփուտներից և հողերի վիճակի վատթարացման այլ տեսակներից գյուղատնտեսական և այլ հողերի պաշտպանությունը.

6) բնապահպանական միջոցառումների, բնության հուշարձանների, արգելավայրերի, կանաչապատ գոտիների օգտագործմանն ու պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

7) հողերի օգտագործման նկատմամբ հատուկ կարգավորման դրույթների

սահմանումը և դրանց ուղղված միջոցառումների իրականացումը:

Հողերի պահպանությունն իրականացվում է հանրապետական և տարածքային ծրագրերին համապատասխան:

3. Հողամասերի սեփականատերերը, օգտագործողները պարտավոր են իրականացնել հողերի պահպանությանն ուղղված՝ սույն հոդվածի 2-րդ կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված միջոցառումները:

4. Հողերի վատթարացումը կանխարգելելու, դրանց բերրիությունը վերականգնելու նպատակով կառավարության սահմանած կարգով թույլատրվում է հողերը ժամանակավորապես դուրս բերել տնտեսական շրջանառությունից:

5. Շինարարական և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտը հանվում և օգտագործվում է պակաս արդյունավետ հողերի բարելավման համար: Հողի բերրի շերտի վաճառքն արգելվում է:

Հողի բերրի շերտի օգտագործման կարգը, հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու

օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը:

6. Հողերի պահպանությունը և արդյունավետ օգտագործումն իրականացվում է հողաշինարարական և բնապահպանական հանրապետական և տարածքային ծրագրերի հիման վրա:

7. Մարդու առողջության ու շրջակա բնական միջավայրի

պահպանության նպատակով կառավարությունը սահմանում է հողն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջները, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկը, հողն աղտոտող վնասակար նյութերի սահմանային թույլատրելի նորմերը, հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման կարգը:

8. Հողերի պահպանությանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներն իրականացնում են դրանց սեփականատերերը և օգտագործողները՝ իրենց միջոցների հաշվին:

Հանրապետական և տարածքային ծրագրերին համապատասխան կատարվող հողերի պետական պահպանության աշխատանքներն իրականացվում են պետական (համայնքային) բյուջեի

միջոցների հաշվին:
9. Խախտված հողերի վերականգնմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով կառավարությունը սահմանում է հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները և խախտված հողերի դասակարգումը՝ ըստ ռեկուլտիվացման ուղղությունների:

Հոդված 37.

1. Նոր շենքեր և շինություններ նախագծելիս, շահագործելիս ու վերակառուցելիս, նոր տեխնոլոգիաներ ներդնելիս պետք է նախատեսվեն ու իրականացվեն հողի պահպանությանը, քաղաքաշինական, բնապահպանական, սանիտարահիգիենիկ և այլ հատուկ պահանջների (նորմերի, կանոնների, նորմատիվների) պահպանմանն ուղղված միջոցառումներ:

2. Հողի վիճակի վրա բացասական ներգործությունը և նախատեսված միջոցառումների արդյունավետությունը գնահատվում է քաղաքաշինական, բնապահպանական, սանիտարահիգիենիկ ու այլ փորձաքննությունների հիման վրա:

Հոդված 38.

1. Տեխնածին, համաճարակային և

այլ վնասակար երևույթների հետևանքով ախտահարման ենթարկված հողամասերը, որոնցում չի ապահովվում սահմանված պահանջներին (նորմերին, կանոններին, նորմատիվներին) համապատասխանող արտադրանքի ստացումը, դուրս են բերվում գյուղատնտեսական շրջանառությունից և կարող են փոխանցվել պահուստային ֆոնդի հողերի կատեգորիա՝ դրանց կոնսերվացման համար: Նման հողերում գյուղատնտեսական մթերքների արտադրությունը և իրացումն **արգելվում է:**

Հոդված 102.

Հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարում են դատական կարգով, հետևյալ հիմքերով՝

1) հողամասի օգտագործումը ոչ նպատակային նշանակությամբ կամ օրենքով և այլ իրավական ակտերով չթույլատրված եղանակով.

2) հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազորված մարմնի սահմանած ժամկետներում օրենսդրության թույլ տրված խախտումները չվերացնելը (հողամասը ռադիոակտիվ և քիմիական նյութերով, թափոններով,

լցակույտերով անհատները, մանրէապարագիտային և կարանտինային վնասատու օրգանիզմներով վարակելը, մոլախոտերով ծածկելը, ժամանակավորապես զբաղեցված հողերի վերադարձման ժամկետները խախտելը, հողի բերրի շերտը ոչնչացնելը և փչացնելը, հատուկ պահպանվող և պատմամշակութային օբյեկտների տարածքների օգտագործման համար սահմանված իրավական ռեժիմի խախտումները, բնակչության առողջությանը վնաս պատճառող եղանակներով հողն օգտագործելը և այլն)։

3) գյուղատնտեսական նշանակության հողամասը երեք տարվա ընթացքում չօգտագործելը՝ հողամասի յուրացման, մեխորատիվ շինարարության, տարերային աղետներից հետո վերականգնման և նման օգտագործումը բացառող այլ հանգամանքների վերացման համար անհրաժեշտ ժամկետի հաշվանցով։

4) կառուցապատման համար տրամադրված հողամասը կամ դրա մասը երեք տարվա ընթացքում չօգտագործելը, եթե պայմանագրով նախատեսված չեն շինարարության ավարտի ավելի երկարատև ժամկետներ։

		<p>5) հողի հարկը երեք տարվա ընթացքում չվճարելը և չորրորդ տարվա ընթացքում պարտքը չմարելը.</p> <p>6) հողամասի ռեկվիզիցիան.</p> <p>7) հողամասի բռնագրավումը.</p> <p>8) հողամասը հասարակության և պետության կարիքների համար օտարելիս.</p> <p>9) հողամասի վրա բռնագանձում տարածելը դրա սեփականատիրոջ պարտավորություններով:</p> <p>Հոդված 103.</p> <p>1. Սույն օրենսգրքի 102-րդ հոդվածի հիմքերով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է դադարել միայն դատարանի վճռի հիման վրա:</p> <p>Հոդված 104.</p> <p>Հողամասի օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ զերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:</p>			
2.	Սեփականության իրավունքը	<p><u>Հայաստանի անկախության մասին հռակագիր</u></p> <p>«7. Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը,</p>			

ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա **ժողովրդի սեփականությունն է:**

ՀՀ Սահմանադրություն

Հոդված 10.

1. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

2. Ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են:

Հոդված 60.

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն

իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 1-ին Արձանագրություն

Հոդված 1.

Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել իրեն գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

ՀՀ Ջրային օրենսգիրք

Հոդված 4.

Հայաստանի Հանրապետության տարածքում առկա ջրային ռեսուրսները պետական սեփականություն են ու տնօրինվում, տիրապետվում և օգտագործվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ջրի ազգային ծրագրով սահմանված պետական նշանակության ջրային համակարգերը պետական սեփականություն են և

մասնավորեցման ենթակա չեն:
Մայրուղային և միջհամայնքային
ջրամատակարարման և
ջրահեռացման համակարգերի
անօտարելի գոտիները պետական
սեփականություն են և
մասնավորեցման ենթակա չեն:

ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք

Հոդված 11.

1. Հայաստանի Հանրապետության
ընդերքը պետության բացառիկ
սեփականությունն է, որը կարող է
տրամադրվել օգտագործման միայն
երկրաբանական
ուսումնասիրությունների և
օգտակար հանածոների
արդյունահանման նպատակներով:

2. Ընդերքի տեղամասերը չեն կարող
լինել առքուվաճառքի, գրավի
առարկա կամ օտարվել այլ ձևով:

Հոդված 12.

1. Ընդերքի երկրաբանական
կառուցվածքի, ընդերքում
պարունակվող օգտակար
հանածոների, հանքավայրերի
երկրաբանական տվյալների,
պաշարների չափի, վերամշակման
պայմանների, ինչպես նաև ընդերքի
այլ առանձնահատկությունների
վերաբերյալ տեղեկությունները,
որոնք պարունակվում են
երկրաբանական
հաշվետվություններում,

քարտեզներում, երկրաբանական փաստագրման առաջնային և այլ նյութերում, Հայաստանի Հանրապետության սեփականությունն են՝ անկախ դրանց ստացման ֆինանսավորման աղբյուրներից:

2. Անկախ ֆինանսավորման աղբյուրից՝ պետական ընդերքաբանական փորձաքննություն անցած երկրաբանական տեղեկությունը պարտադիր կարգով տնօրինման, պահպանության, համակարգման և ընդհանրացման է տրամադրվում լիազոր մարմնին՝ անհատույց՝ կառավարության սահմանած կարգով:

3. Անկախ տեղեկության ստացման ձևից՝ ձեռք բերված երկրաբանական տեղեկությունը ընդերքօգտագործողը կարող է տնօրինել և օգտագործել միայն ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում:

4. Ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալուց հետո կամ դրանից հրաժարվելու դեպքում ընդերքօգտագործողների տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկությունը 3 ամսվա ընթացքում հանձնվում է լիազոր մարմնին՝ կառավարության

		<p>սահմանաձև կարգով:</p> <p>5. Քաղաքաշինական գործունեության օբյեկտներ հանդիսացող օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցների շինարարության ընթացքում ստացված երկրաբանական տեղեկությունները տնօրինման, պահպանության, համակարգման և ընդհանրացման են տրամադրվում ընդերքի ոլորտի լիազոր մարմնին անհատույց՝ կառավարության սահմանաձև կարգով:</p> <p>ՀՀ Անտառային օրենսգիրք</p> <p>Հոդված 4.</p> <p>1. Անտառները և անտառային հողերը լինում են պետական, համայնքային և մասնավոր:</p> <p>2. Պետական անտառները և անտառային հողերը ենթակա չեն օտարման համայնքներին, իրավաբանական անձանց և քաղաքացիներին:</p> <p>3. Համայնքների, իրավաբանական անձանց և քաղաքացիների սեփական հողերի վրա դրանց սեփականատերերի կողմից հիմնված անտառները համարվում են նրանց սեփականությունը:</p>			
3.	Բնական պաշարների	<p>ՀՀ Ջրային օրենսգիրք</p> <p>Հոդված 23.</p>			

մատչելիության և կայուն օգտագործման, ջրի, հողի, ընդերքի, անտառների, բուսական և կենդանական աշխարհի, էկոհամակարգերի և լանդշաֆտների պահպանման իրավունք

Յուրաքանչյուր ոք ռեկրեացիոն նպատակներով իրավունք ունի ազատորեն և անվճար օգտագործել բնական մակերևութային ջրային ռեսուրսները և դրան հարակից տարածքները, քանի դեռ կառավարությունը կամ նրա լիազորած մարմինը չի սահմանել, որ այդպիսի օգտագործումը կարող է վնասակար լինել մարդկանց առողջության կամ անվտանգության համար կամ հակասում է հասարակական շահերին:

[ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք](#)

Հոդված 26.

1. Ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ազգային անվտանգության ապահովման, **մարդկանց կյանքի և առողջության**, պատմամշակութային արժեքների կամ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից, եթե հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող հողամասում կան՝

- 1) գերեզմաններ.
- 2) բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ.
- 3) Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված բույսեր կամ կենդանիների բնակատեղիներ, ինչպես նաև եթե տվյալ տարածքով

անցնում են կենդանիների միգրացիոն ուղիներ:

2. Ընդերքօգտագործումը բնության հատուկ պահպանվող տարածքներում կարող է իրականացվել միայն Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 48.

1. Իրավաբանական անձինք և քաղաքացիները, առանց ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման, իրենց սեփական հողամասերի սահմաններում շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, տնտեսական և կենցաղային սեփական կարիքների բավարարման նպատակով կարող են կատարել պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում՝ մինչև 2 մետր խորությամբ, ինչպես նաև ստորերկրյա կառույցների շինարարություն՝ մինչև 5 մետր խորությամբ՝ կառավարության սահմանած կարգով, տեղյակ պահելով լիազոր մարմնին:

Հոդված 64.

1. Ընդերքօգտագործողը պետք է ապահովի հետևյալ միջոցառումների իրականացումը՝

- 1) մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, կենդանական և բուսական աշխարհի պաշտպանությունն ու պահպանումը.
- 2) բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի պահպանումը.
- 3) ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացիայի, ծառատնկման, կանաչապատման աշխատանքների իրականացումը, մշակված հանքային տարածությունների վերականգնումը.
- 4) արդյունաբերական (ընդերքօգտագործման) թափոնների օգտագործման, օգտահանման, չեզոքացման և նվազեցման աշխատանքների միջոցառումների կատարումը.
- 5) վտանգավոր նյութերի և արտադրության ու սպառման թափոնների (բացառությամբ ռադիոակտիվ) գործածության առաջացման, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, վնասազերծման, տեղադրման և թաղման համար սահմանված նորմերի պահպանումը.
- 6) շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթարկված փաստաթղթերի պահանջների ու միջոցառումների

կատարումը.

7) բնապահպանական վճարների հաշվարկման կարգի պահպանումը.

8) բնապահպանական վարչական վիճակագրության վարման և ներկայացման կարգի պահպանումը.

9) շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովումը:

Հոդված 69.

1. Օգտակար հանածո արդյունահանողների կողմից սահմանված չափով կատարվող հատկացումների հաշվին ստեղծվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխ: Դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանում է կառավարությունը:

2. Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացումներ կատարելու ընդերքօգտագործողի պարտականությունը ներառվում է ընդերքօգտագործման պայմանագրում:

3. Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի գումարները պահվում են կենտրոնական գանձապետարանում

բացված լիազոր մարմնի արտաբյուջետային հաշվում և բացառապես օգտագործվում են՝

1) ընդերքօգտագործողի կողմից իրականացվող՝ նախագծով ստանձնված բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքների կատարման նպատակով.

2) ընդերքօգտագործողի կողմից նախագծով ստանձնված, բայց իր կողմից չիրականացված բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքների կատարման նպատակով.

3) ընդերքօգտագործողի գործունեության հետևանքով բնությանը և շրջակա միջավայրին հասցված և նրա կողմից չհատուցված վնասների վերականգնման նպատակով:

4. Բնապահպանական աշխատանքների իրականացման համար դրամագլխից ընդերքօգտագործողին տրամադրվող գումարը չի կարող գերազանցել ընդերքօգտագործողի կատարած՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հատկացումները:

5. Սույն հոդվածով նախատեսված միջոցառումների կատարումից հետո ընդերքօգտագործողի կողմից

շրջակա միջավայրի
պահպանության դրամագլխին
վճարված գումարի մնացորդը
վերադարձվում է

ընդերքօգտագործողին:

Հոդված 70.

1. Ընդերքօգտագործողը պարտավոր
է նախագծով սահմանված
ժամկետներում և կարգով, ինչպես
նաև ընդերքօգտագործման
պայմանագրի դրույթներին
համապատասխան, իրականացնել
բնապահպանական (այդ թվում՝
ռեկուլտիվացիոն) աշխատանքներ:

2. Նախագծի փոփոխության,
ընդերքի տեղամասի ընդլայնման,
ընդերքի տեղամասի կամ դրա մի
մասի նկատմամբ
ընդերքօգտագործման իրավունքից
հրաժարվելու դեպքում
ընդերքօգտագործման
պայմանագրում շրջակա միջավայրի
պահպանության դրամագլխին
հատկացումների չափի վերաբերյալ
դրույթները
համապատասխանաբար ենթակա
են փոփոխության:

3. Եթե ընդերքօգտագործողը
սահմանված ժամկետում չի
կատարում նախագծով կամ
ընդերքօգտագործման
պայմանագրով նախատեսված
բնապահպանական (այդ թվում՝

ռեկուլտիվացիոն) աշխատանքները, ապա լիազոր մարմինը գրավոր ծանուցման միջոցով ընդերքօգտագործողից պահանջում է իր սահմանած ժամկետում իրականացնել նշված միջոցառումները:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված պահանջը չկատարվելու դեպքում լիազոր մարմինը սեփական նախաձեռնությամբ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի միջոցների հաշվին ձեռնարկում է նշված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները՝ այդ մասին նախապես ծանուցելով ընդերքօգտագործողին:

5. Լիազոր մարմինն ընդերքօգտագործողների կատարած հատկացումների հաշվին հանքի փակման ծրագրով նախատեսված ժամկետներում օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով իրականացնում է մշտադիտարկում հետագա

աղետների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

ՀՀ Անտառային օրենսգիրք

Հոդված 21.

1. Անտառի սեփականատերերը, անտառային տնտեսություն վարող անձինք և անտառօգտագործողներն իրավունք ունեն անտառները պահպանելու ինքնակամ զավթումներից, ապօրինի հատումներից, ապօրինի արածեցումներից, աղտոտումներից, աղբոտումներից և օրենսդրությամբ արգելված անտառային կենսաբազմազանությանը վնաս պատճառող այլ գործողություններից և անտառային օրենսդրության խախտումներից:

3. Անտառային հողերի հարակից տարածքներում օբյեկտների նախագծումը, տեղաբաշխումը, շինարարությունը և գործարկումը պետք է ապահովեն անտառների վիճակի վրա բացասական ազդեցությունների կանխարգելումը: Տարածքների անտառային հողերին հարակից լինելը որոշվում է տվյալ գործունեության բնապահպանական փորձաքննության հիման վրա:

Հոդված 44.

1. Քաղաքացիներն իրավունք ունեն ազատորեն՝ առանց որևէ

թույլտվության, գտնվելու պետության կամ համայնքի սեփականության ներքո գտնվող անտառներում՝ հանգստի, անձնական օգտագործման նպատակով վայրի պտուղ, հատապտուղ, ընկույզ, սունկ և բույսեր հավաքելու համար, բացառությամբ օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերի:

2. Քաղաքացիներն իրավունք չունեն առանց սեփականատիրոջ թույլտվության մուտք գործելու քաղաքացու կամ իրավաբանական անձի սեփականության ներքո գտնվող անտառը:

3. Քաղաքացիները պարտավոր են անտառներում պահպանել հրդեհային անվտանգության կանոնները, թույլ չտալ ծառերի և թփերի կոտրատում և հատումներ, անտառների աղտոտում, մրջնանոցների, թռչունների և կենդանիների բնատեղերի ոչնչացում և անտառային օրենսդրության այլ խախտումներ:

Հոդված 60.

1. Անտառային օրենսդրության խախտման դեպքերն են՝

- ա) անտառների սեփականության իրավունքը խախտելը.
- բ) անտառային հողերում ծառերն ու

թփերը հատելը և արմատախիլ անելը.

գ) հրկիզման կամ կրակի հետ անփույթ վարվելու հետևանքով անտառը վնասելը կամ ոչնչացնելը, ինչպես նաև անտառներում հրդեհային անվտանգության կանոնների պահանջները խախտելը.

դ) բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմը խախտելը.

ե) անտառները քիմիական և ռադիոակտիվ նյութերով, արտադրական կեղտաջրերով, արդյունաբերական արտանետումներով, կենցաղային մնացուկներով և արտադրական թափոններով աղտոտելը.

զ) անտառները ոչնչացնելը կամ վնասելը.

է) անտառավերականգնման կարգը և ժամկետները խախտելը.

ը) անտառային հողերն առանց թույլտվության օգտագործելը, այդ հողերում ծառերն ու թփերն արմատախիլ անելը, ճանապարհների,

խողովակաշարերի, շենքերի և շինությունների կառուցումը, հանքերի շահագործումը, բնափայտի մթերումը և այլ նպատակներով օգտագործումը, անտառային տարածքներն ինքնակամ զավթելը.

թ) անտառային հողերում ինքնակամ խոտհունձը և արածեցումը.

ժ) անտառային հողերի բերրի շերտը վնասելը կամ ոչնչացնելը, անտառներում սանիտարական կանոնները խախտելը.

ժա) անտառոգտագործման, անտառավերականգնման և անտառապատման կարգը խախտելը.

ժբ) ոռոգման համակարգը վնասելը.

ժգ) անտառային հողերում ճահճակալած տարածքները, դրենաժային չորացման առուների համակարգերը, ինչպես նաև ճանապարհները վնասելը կամ ոչնչացնելը.

ժդ) ինքնակամ վայրի պտուղներ, ընկույզ, սունկ, հատապտուղ և այլն հավաքելն անտառային այն տարածքներում, որտեղ դա արգելվում է.

ժե) վայրի պտուղներ, ընկույզ, հատապտուղ և այլն հավաքելու ժամկետները և եղանակները խախտելը.

ժզ) անտառի կենդանական աշխարհի օբյեկտներին վնաս հասցնելը.

ժէ) անտառային հողերում սահմանափակող անտառաշինական և այլ նշանները ոչնչացնելը կամ վնասելը.

ժը) առանց անտառի վրա վնասակար ազդեցությունը կանխող կայանքների արտադրական օբյեկտները շահագործման հանձնելը.

ժթ) ջրերն աղտոտելու հետևանքով անտառային տնտեսությանն էական վնաս պատճառելը.

ի) քամատապալ, ձյունակոտոր, արմատից հատված ծառերը յուրացնելը և այլ խախտումներ:

2. Անտառային օրենսդրության խախտման համար մեղավոր անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով: Անտառային օրենսդրության խախտման համար կիրառված պատասխանատվությունը չի ազատում օրենքով սահմանված կարգով խախտումները վերացնելու և հասցված վնասը հատուցելու պարտավորությունից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք

Հոդված 4.

Հայաստանի Հանրապետությունում բուսական աշխարհի պահպանության օբյեկտներ են **բուսական բոլոր տեսակները**, բուսական համակեցությունները (կիսաանապատային, տափաստանային, անտառային, մարգագետնային, ջրաճահճային և

այլն), **դրանց աճելավայրերը**, ինչպես նաև բուսաբանական այգիները, դենդրոպարկերը, անտառտնկարկները և բուսական ծագում ունեցող բնության հուշարձանները:

Հոդված 15.

Հայաստանի Հանրապետությունում բուսական աշխարհի պահպանության և

պաշտպանության խնդիրներն են՝

ա) ապահովել բուսական աշխարհի բազմազանության ամբողջականությունը.

բ) կանխել բուսական աշխարհի օբյեկտների ապօրինի օգտագործումը.

գ) բուսական աշխարհի օբյեկտների աճելավայրերը տնտեսական նպատակներով շահագործելու ժամանակ ապահովել Հայաստանի Հանրապետության բնության պահպանության մասին օրենսդրության պահանջների կատարումը.

դ) ապահովել բուսական ծածկույթի ջրապահպան, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ և ռեկրեացիոն հատկությունների անխաթարությունը.

ե) կանխել բույսերի և դրանց բազմազման օրգանների ապօրինի

ներմուծումը և արտահանումը.

զ) պաշտպանել բուսական աշխարհի օբյեկտները վնասատուներից, հիվանդություններից և բնական աղետներից.

է) ապահովել բնակավայրերի կանաչ գոտիներում բուսական աշխարհի օբյեկտների պաշտպանությունը դրանց ծավալների (քանակի) ավելացման և տեսակային կազմի պահպանության նպատակով:

Հոդված 16.

Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանության են ենթակա բուսական աշխարհի **բոլոր օբյեկտները:**

Բուսական աշխարհի **օբյեկտների և դրանց աճելավայրերի անվտանգությունը**, ինչպես նաև բուսական ծածկույթի ջրապահպան, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ և ռեկրեացիոն հատկությունների անխաթարությունը, նախատեսվող տնտեսական, սոցիալական և այլ գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 17.

Հողօգտագործողները, որոնց

տարածքներում աճում են Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներ, պարտավոր են միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Արգելվում է ցանկացած գործունեություն, որը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների **թվաքանակի կրճատմանը** և **դրանց աճելավայրերի վատթարացմանը:**

Սույն հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսված պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը հողօգտագործողներին փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 18.

Բուսական աշխարհի օբյեկտների պաշտպանության նպատակով արգելվում է՝

- ա) հրկիզումը.
- բ) հանքային պարարտանյութերի և թունաքիմիկատների չկանոնակարգված օգտագործումը.
- գ) բուսատեսակների ապօրինի

ներմուծումը Հայաստանի
Հանրապետություն,
կլիմայավարժեցումը և սելեկցիոն
նպատակով օգտագործումը.

դ) կենսաբանական
տեխնոլոգիաների միջոցով
ստացված կենդանի ձևափոխված
օրգանիզմների ինքնակամ
օգտագործումը.

ե) բնակավայրերում կանաչ
գոտիների չափերին և տեսակային
կազմին ներկայացված պահանջների
խախտումը:

[«Կենդանական աշխարհի մասին»](#)

[ՀՀ օրենք](#)

Հոդված 4.

Հայաստանի Հանրապետությունում
կենդանական աշխարհի
պահպանության օբյեկտներ են
բնական միջավայրում, անագատ և
կիսաագատ պայմաններում ապրող
կենդանիների վայրի տեսակները
(անողնաշարավոր և
ողնաշարավոր), դրանց
համակեցությունները, բնակության
միջավայրերը, միգրացիայի
ուղիներն ու բնադրավայրերը:

Կենդանական աշխարհի
օգտագործման օբյեկտներ են
կենդանիների այն տեսակները և
դրանց արգասիքները (միսը, մորթին,
ոսկորը, կենսագործունեության
արտադրանքը և այլն), որոնք ունեն

սննդային, գիտական,
դեղագործական, կերային,
արդյունաբերական և այլ
նշանակություն:

Հոդված 16.

Հայաստանի Հանրապետությունում
կենդանական աշխարհի
պահպանության և
պաշտպանության խնդիրներն են՝

ա) ապահովել **կենդանական**
աշխարհի տեսակային
բազմազանության
ամբողջականության
պահպանությունը.

բ) կանխել **կենդանական**
աշխարհի օբյեկտների ապօրինի
օգտագործումը.

գ) **կենդանական** աշխարհի
օբյեկտները տնտեսական
նպատակներով շահագործելիս
ապահովել Հայաստանի
Հանրապետության օրենսդրության
պահանջների կատարումը.

դ) ապահովել **կենդանական**
աշխարհի օբյեկտների
պահպանությունը.

ե) կանխել **կենդանական**
աշխարհի օբյեկտների և դրանց
արգասիքների ապօրինի
ներմուծումը և արտահանումը.

զ) պաշտպանել **կենդանական**
աշխարհի օբյեկտները
հիվանդություններից և բնական

աղետներից:

Հոդված 17.

Հայաստանի Հանրապետությունում **կենդանական** աշխարհի բոլոր օբյեկտները ենթակա են իրավական պահպանության:

Կենդանական աշխարհի օբյեկտների և դրանց ապրելավայրերի անվտանգության, ինչպես նաև կենդանիների կենսագործունեության առանձնահատկությունների անխաթարությունն ապահովելու նպատակով նախատեսվող տնտեսական, շինարարական, սոցիալական և այլ գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 18.

Բնական պաշարներն օգտագործողները, որոնք տնտեսական կամ այլ աշխատանքների ընթացքում վնաս են հասցնում Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիներին, պարտավոր են միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար: **Արգելվում է** ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում

գրանցված տեսակների **թվաքանակի կրճատմանը** և **դրանց ապրելավայրերի վատթարացմանը:**
Հոդված 19.

Կենդանական աշխարհի օբյեկտների պաշտպանության նպատակով **արգելվում է՝**

ա) **կենդանական** տեսակների ապօրինի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն, տեղափոխումը այլ ապրելավայր, կլիմայավարժեցումը և սելեկցիոն նպատակներով օգտագործումը.

բ) պարարտանյութերի և թունանյութերի չկանոնակարգված օգտագործումը.

գ) կենսաբանական տեխնոլոգիաների միջոցով ստացվող ձևափոխված նոր կենդանի օրգանիզմների ինքնակամ օգտագործումը.

դ) կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը և խոշտանգումը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

Հոդված 51.

1. Համայնքի ղեկավարը շրջակա միջավայրի պահպանության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունը.

1) կազմակերպում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի և դրանց վրա գտնվող

			<p>համայնքային նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների և համայնքային անտառների պահպանությունը:</p> <p>2. Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.</p> <p>1) օրենքով սահմանված կարգով հսկողություն է իրականացնում համայնքի սեփականություն հանդիսացող հողերում բնապահպանական միջոցառումների իրականացման նկատմամբ.</p> <p>2) ապահովում է հողերի պահպանությունը հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով, արտադրական և կենցաղային թափոններով աղտոտումից:</p>			
	Առնչվող իրավունքներ					
4.	Տեղեկատվության մատչելիության իրավունք		<p>ՀՀ Սահմանադրություն Հոդված 51. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և</p>			

փաստաթղթերին ծանոթանալու
իրավունք:
ՇՐՋԱԿԱՍՄԻՋԱՎԱՅՐԻ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ
ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ և
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՍՁԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Օրհուսի Կոնվենցիա/

Հոդված 4

«1. Յուրաքանչյուր կողմ ապահովում է, որ, սույն հոդվածի ներքոնշյալ կետերի համաձայն, ի պատասխան բնապահպանական տեղեկություն տրամադրելու խնդրանքի, պետական մարմինները ազգային օրենսդրության շրջանակներում հասարակությանը տրամադրեն այդ տեղեկությունը, ներառյալ՝ հայցի առկայության դեպքում և ստորև բերված բ) կետին համապատասխան, իրական փաստաթղթերի պատճենները, որոնք պարունակում են կամ իրենց մեջ ներառում են այդպիսի տեղեկությունը՝

ա) առանց անհրաժեշտության ձևակերպել իր հետաքրքրությունը.

բ) պահանջված ձևով, եթե միայն՝

i) պետական մարմինը հիմքեր չունի տրամադրել այն այլ ձևով. այս

դեպքում պետք է նշված լինեն այն պատճառները, որոնք արդարացնում են տեղեկության տրամադրումը տվյալ ձևով, կամ

ii) տեղեկությունը հասարակությանը արդեն չի տրամադրվել այլ ձևով:

2. Կետ 1-ում և ավելի վեր հիշատակվող

բնապահպանական

տեղեկությունը տրամադրվում է առավելագույնս սեղմ

ժամանակամիջոցում, սակայն ոչ ուշ, քան ինդրանքի

ներկայացման օրվանից մեկ ամսվա ընթացքում, եթե

համապատասխան

տեղեկության ծավալը և բարդությունը չի արդարացնում

այդ ժամանակամիջոցի՝ երկարացումը մինչև երկու ամիս՝

ինդրանքի ներկայացման օրվանից: Խնդրանքը

ներկայացնողը տեղեկացվում է այդ ժամանակահատվածի

ցանկացած երկարաձգման և այն պատճառների մասին, որոնք

արդարացնում են այդպիսի որոշման ընդունումը:

[«Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք](#)

Հոդված 10.

Քաղաքացիներն ունեն՝

2) շրջակա միջավայրի սանիտարահամաճարակային իրադրության վերաբերյալ հավաստի և ամբողջական տեղեկատվության և իրազեկման իրավունք.

[«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք](#)

Հոդված 37.

Մթնոլորտային օդի վիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքումը, պահպանումը, որոնումն ու մշակումը կատարվում է միասնական համակարգով: Բնական միջավայրի աղտոտման նկատմամբ հսկողության և վերահսկողության ծառայությունների վրա է դրվում պետական և հասարակական շահագրգիռ մարմիններին, ձեռնարկություններին, հիմնարկներին ու կազմակերպություններին մթնոլորտային օդի աղտոտման մակարդակների վերաբերյալ անընդմեջ տեղեկատվության անվճար ապահովումը:

[ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք](#)

Հոդված 13.

1. Երկրաբանական տեղեկությունը տրամադրվում է անվճար. լիազոր մարմինն վճարում են միայն

տեղեկության տրամադրման հետ կապված մատուցված ծառայությունների դիմաց՝ կառավարության սահմանած կարգով:

2. Ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում ընդերքօգտագործողի ստացած երկրաբանական տեղեկությունը չի կարող բացահայտվել առանց ընդերքօգտագործողի համաձայնության: Լիազոր մարմինը պարտավոր է ապահովել երրորդ անձանցից երկրաբանական տեղեկության գաղտնիությունը դրա կուտակման, արձանագրման, պահպանության, փոխանցման և օգտագործման ընթացքում:

3. Երկրաբանական տեղեկության գաղտնիության բացահայտման դեպքում բացահայտողը ենթարկվում է պատասխանատվության Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4. Երկրաբանական տեղեկության բացահայտման արգելքը չի գործում, եթե երկրաբանական տեղեկությունը տրամադրվում է՝

1) դատարանի որոշման հիման վրա.

2) ընդերքօգտագործման

իրավունքների վերաբերյալ
պետական վիճակագրական
հաշվետվություն կազմելու
նպատակով.

3) լիազոր մարմնի ներքին
շրջանակներում օգտագործման
նպատակով.

4) ընդերքի պետական տեսչությանը,
բնապահպանական պետական
տեսչությանը, հարկային
մարմիններին՝ վերջիններիս
իրավասության սահմաններում
օրենքով սահմանված կարգով
իրականացվող վերահսկողական և
հսկողական աշխատանքներում
օգտագործելու նպատակով:

Հոդված 60.6.

11. Վթարների դեպքում պահանջվող
գործողությունների մասին
տեղեկություններն անվճար
տրամադրվում են ազդակիր
համայնքների բնակչությանը, և այդ
տեղեկատվությունը վերանայվում է
յուրաքանչյուր երեք տարին մեկ և
անհրաժեշտության դեպքում՝
թարմացվում:

12. Սույն հոդվածի 10-րդ մասով
նախատեսված՝ ազդակիր համայնքի
բնակչությանը տեղեկացնելու,
ազդակիր համայնքի բնակչության
կողմից առաջարկություններ
ներկայացնելու և այդ
առաջարկությունների քննարկման

կարգը սահմանում է արտակարգ իրավիճակների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք

Հոդված 29.

1. Լիազորված պետական մարմինը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվություն է տրամադրում՝

ա) **բնության հատուկ պահպանվող տարածքում** նախատեսվող գործունեության մասին.

բ) **բնության հատուկ պահպանվող տարածքի** պահպանության և օգտագործման վերաբերյալ որոշումների մասին.

գ) **բնության հատուկ պահպանվող տարածքների** էկոլոգիական իրավիճակի մասին:

2. Լիազորված պետական մարմնի կողմից **բնության հատուկ պահպանվող տարածքների** վերաբերյալ տեղեկատվության տրամադրման միջոցներն են՝

ա) զանգվածային լրատվության միջոցները.

բ) էլեկտրոնային հաղորդակցության միջոցները.

գ) հասարակական լուսմների

կազմակերպումը.

դ) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարցումներին պատասխանելը:

Հոդված 30.

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի պահանջելու և ստանալու **բնության հատուկ** պահպանվող տարածքների պահպանության, օգտագործման և իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն:

2. Անձը **բնության հատուկ** պահպանվող տարածքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար կարող է դիմել լիազորված պետական մարմնին և (կամ) տեղական ինքնակառավարման այն մարմնին, որի վարչական սահմաններում է գտնվում տեղական նշանակության՝ **բնության հատուկ** պահպանվող տարածքը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք

Հոդված 6.

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն սնօրինողին և ստանալու այդ

տեղեկությունը:

Հոդված 7.

1. Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում և հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

2. Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը:

3. Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները և դրանցում

կատարված փոփոխությունները.

1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները.

2) բյուջեն.

3) գրավոր հարցումների ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները.

4) հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները.

5) աշխատանքի ընդունման կարգը և թափուր աշխատատեղերը.

6) **շրջակա միջավայրի վրա ներգործությունը.**

7) հասարակական միջոցառումների ծրագրերը.

8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը.

9) աշխատանքների և ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները).

10) տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը.

11) ստացված հարցումների

վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը.

12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները.

13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները հրապարակվում են դրանք կատարվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

5. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում՝ նաև դրանով:

6. Հանրային նշանակության, ինչպես նաև բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող կազմակերպությունները կարող են չհրապարակել սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերում սահմանված տեղեկությունները և դրանց փոփոխությունները:

Հոդված 9.

1. Գրավոր հարցման մեջ նշվում է

դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը: Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը):

2. Գրավոր հարցումների գործավարությունն իրականացվում է քաղաքացիների դիմումների և բողոքների համար օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գործավարության մյուս ձևերից առանձին:

3. Գրավոր հարցմանը պատասխան չի տրվում, եթե՝

1) դա չի պարունակում սույն հոդվածի 1-ին մասում նշված բոլոր տվյալները.

2) պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են.

3) դա նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ դիմումն է, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի:

4. **Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը:**

Գրավոր հարցման

պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ **5-օրյա** ժամկետում.

2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ **5-օրյա** ժամկետում.

3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ **30-օրյա** ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ **5-օրյա** ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

8. Գրավոր հարցման պատասխանը տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով: Եթե նյութական կրիչը նշված չէ, և դա անհնար է

պարզել տվյալ հարցմանը՝ սույն օրենքով սահմանված ժամկետում պատասխանելու համար, ապա գրավոր հարցման պատասխանը տրվում է տեղեկությունը տնօրինողին առավել ընդունելի նյութական կրիչով:

9. Սույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում հարցմամբ դիմողն իր ցանկությամբ կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ հետ վերցնելով իր գրավոր հարցումը:

10. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ **5-օրյա** ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

11. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն

ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցման պատասխանում նշում է նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք

Հոդված 10.

Պետական և ծառայողական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել՝

ա) քաղաքացիների անվտանգությանը և **առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաև տարերային** (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետևանքների մասին տեղեկությունները.

բ) տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև **բնության և շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առևտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները.**

գ) քաղաքացիների

		<p>իրավունքների և ազատությունների սահմանափակման փաստերի, իրավախախտումների և սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների մասին տեղեկությունները.</p> <p>դ) այն տեղեկությունները, որոնք եթե դասվեն պետական և ծառայողական գաղտնիքի շարքին, ապա բացասական ազդեցություն կունենան Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական և ճյուղային ծրագրերի իրականացման վրա.</p> <p>ե) արտակարգ իրավիճակների կանխման կամ դրանց առաջացման դեպքում հնարավոր հետևանքները նվազեցնելու ու վերացնելու, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու, մարդասիրական օգնություն ցուցաբերելու համար նախատեսված արագ արձագանքման պաշարի մասին տեղեկությունները:</p>			
5.	<p>Որոշումների կայացման գործընթացում մասնակցության իրավունք</p>	<p>ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ</p>			

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ և
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
Կոնվենցիա /Օրհուս/

Հոդված 7.

«2. Շահագրգիռ հասարակությունը պատշաճորեն, ժամանակին և արդյունավետ ձևով տեղեկացվում է, կախված հանգամանքներից, կամ հրապարակային ծանուցման կամ անհատական կարգով որոշման ընդունման գործընթացի առաջին փուլում այն հարցերով, որոնք կապված են **շրջակա** միջավայրի հետ, ի թիվս այլոց, հետևյալի մասին

- ա) նախատեսվող գործունեության տեսակի մասին և այն հայցի մասին, որի վերաբերյալ պետք է ընդունվի որոշումը,
- բ) հնարավոր որոշումների բնույթի կամ որոշման նախագծի մասին,
- գ) այն պետական մարմնի մասին, որը պատասխանատու է որոշում ընդունելու համար,
- դ) նախատեսվող ընթացակարգի մասին, ներառյալ այն, թե ինչ ձևով և երբ է կարող տրամադրվել տեղեկությունը,
 - i) ընթացակարգի իրականացման սկզբի մասին,
 - ii) հասարակության մասնակցության հնարավորությունների մասին,

iii) ցանկացած նախատեսվող հասարակական լսման ժամանակի և տեղի մասին,

iv) այն պետական մարմնի մատնանշման մասին, որից կարելի է ստանալ համապատասխան տեղեկությունը, և այն մասին, թե ուր է տեղափոխվել համապատասխան տեղեկությունը՝ հասարակության կողմից,

v) համապատասխան պետական մարմնի կամ ցանկացած այլ պաշտոնական մարմնի առկայության մասին, որին կարող են ներկայացվել դիտողությունները կամ հարցերը, և դիտողությունների կամ հարցերի ներկայացման ժամանակացույցի մասին, և

vi) այն բանի մասին, թե նախատեսվող գործունեության առնչությամբ ինչ բնապահպանական տեղեկություն է առկա,

ե) այն փաստի մասին, որ տվյալ գործունեությունը ընդգրկված է **շրջակա** միջավայրի վրա ունեցող ազդեցության ազգային կամ անդրսահմանային գնահատման ընթացակարգի մեջ:

3. Հասարակության մասնակցության ընթացակարգերը նախատեսում են զանազան փուլերի իրագործման ընդունելի ժամկետներ,

որոնք ապահովում են բավարար ժամանակ վերոհիշյալ 2-րդ կետի համաձայն բնապահպանական հարցերի կապակցությամբ հասարակության տեղեկացման և որոշումներ կայացնելու գործընթացին հասարակության նախապատրաստման ու արդյունավետ մասնակցության համար:

4. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է հասարակության մասնակցությունը ամենավաղ փուլում, երբ բաց են բոլոր հնարավորությունները զանազան տարբերակների դիտարկման համար, և երբ կարելի է ապահովել հասարակության արդյունավետ մասնակցությունը:

5. Յուրաքանչյուր Կողմ պետք է, անհրաժեշտ դեպքերում, խրախուսի պոտենցիալ դիմողներին, նախքան թույլտվություն ստանալու հայտ ներկայացնելը որոշի շահագրգիռ հասարակության խավերը, անցկացնի քննարկումներ և տեղեկություն ներկայացնի հայտի նպատակների մասին:

6. Հարցում ստանալու դեպքում յուրաքանչյուր Կողմ կպահանջի իրավասու մարմիններից ապահովել, որտեղ պահանջվում է ազգային օրենսդրությամբ, հասարակության

շահագրգիռ խավերի համար այն տեղեկության մատչելիությունը, որը կապված է այս հոդվածում նշված որոշումներ կայացնելու գործընթացի հետ և մատչելի է հասարակության մասնակցության ընթացակարգի պահին՝ առանց վտանգելու Կողմերի այն իրավունքը, որը վերաբերում է հոդված 4-ի 3 և 4 կետերում նշված որոշ տեղեկության բացահայտման մերժմանը:

ա) արդյունաբերական օբյեկտի և առաջարկվող գործունեության ֆիզիկական և տեխնիկական բնութագրերի նկարագրությունը, ներառյալ ենթադրվող թափոնների և արտանետումների մոտավոր հաշվարկը,

բ) **շրջակա** միջավայրի վրա նախատեսվող գործունեության զգալի ազդեցության նկարագրությունը,

գ) այն միջոցառումների նկարագրությունը, որոնք նախատեսված են ազդեցության, ներառյալ՝ արտանետումների, կանխարգելման և/կամ նվազեցման համար,

դ) վերոհիշյալի ոչ տեխնիկական ամփոփումը,

ե) հիմնական այլընտրանքների ուրվագիծը, որոնք դիտարկվել են հայտը ներկայացնողի կողմից, և

զ) հիմնական հաշվետվությունները և խորհուրդները, որոնք, ազգային օրենսդրությանը համապատասխան, ուղղվում են պետական մարմին այն ժամանակ, երբ շահագրգիռ հասարակությանը ներկայացվելու է տեղեկություն՝ համաձայն վերը բերված կետ 2-ի:

7. Հասարակայնության մասնակցության ընթացակարգերը նրան թույլատրում են ներկայացնել գրավոր ձևով կամ, անհրաժեշտ դեպքերում, հայտը ներկայացնողի մասնակցությամբ տեղի ունեցող հասարակական լուսմների կամ հարցի քննարկման ժամանակ ցանկացած դիտողություններ, տեղեկություն, վերլուծություններ կամ կարծիքներ, որոնք նրա կարծիքով առնչվում են նախատեսվող գործունեությանը:

8. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ համապատասխան որոշման մեջ պատշաճ ձևով արտացոլված լինեն հասարակության մասնակցության արդյունքները:

9. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ պետական մարմնի կողմից որոշում ընդունելուց հետո հասարակությունը անմիջապես տեղեկացվի այդ որոշման մասին՝

ըստ համապատասխան
ընթացակարգերի: Յուրաքանչյուր
Կողմ հասարակությանը
կներկայացնի իր որոշման տեքստը
նշելով այն պատճառները և
նկատառումները, որոնք դրված են
որոշման հիմքում:

**«Մթնոլորտային օդի
պահպանության մասին» ՀՀ օրենք**

Հոդված 9.

Հասարակական
կազմակերպությունները
Հայաստանի Հանրապետության
օրենսդրությանը և իրենց
կանոնադրություններին
համապատասխան իրավունք ունեն
մասնակցելու մթնոլորտային օդի
պահպանության միջոցառումների
իրականացմանը:

Մթնոլորտային օդի պահպանության
միջոցառումներն իրականացնելիս
պետական մարմինները պարտավոր
են հաշվի առնել հասարակական
կազմակերպությունների և
քաղաքացիների
առաջարկությունները՝ Հայաստանի
Հանրապետության օրենսդրությամբ
սահմանված կարգով:

Հոդված 21

«Մթնոլորտային օդի վիճակի վրա
ներգործող բոլոր
ձեռնարկությունների, կառույցների և
այլ օբյեկտների տեղի ընտրությունը

և դրանց կառուցման ու վերակառուցման նախագծերն էկոլոգիական փորձաքննության են ենթարկվում բնության պահպանության բնագավառում լիազոր մարմինների կողմից՝ **հասարակական կազմակերպությունների** և անկախ փորձագետների մասնակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

[ՀՀ Ջրային օրենսգիրք](#)

Հոդված 20.

Պետական կառավարման լիազորված մարմինների կողմից հասարակայնության ծանուցման են ենթակա՝

- 1) ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների նախագիծը.
- 2) ջրի ազգային ծրագրի նախագիծը.
- 3) ջրավազանային կառավարման պլանների նախագծերը.
- 4) ջրօգտագործման քննարկվող թույլտվությունները.
- 6) ջրերի ստանդարտների նախագծերը.
- 7) ջրերի սակագնային ռազմավարության նախագիծը:

Եթե ջրային ռեսուրսների որակը կամ ջրօգտագործումը վտանգ է սպառնում մարդկանց կյանքին կամ անվտանգությանը, կամ եթե

աղտոտվում են ջրային ռեսուրսները, ապա այդ մասին տեղյակ յուրաքանչյուր անձ կարող է տվյալ իրավիճակի և դրա տեղանքի մասին ծանուցել Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնին: Ջրային ռեսուրսներն աղտոտողը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղյակ պահել Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնին: Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնին այս մասին անհապաղ տեղյակ է պահում հասարակությանը՝ երաշխավորելով վտանգի տակ գտնվող անձանց ռիսկի աստիճանը և տեղեկացնում հնարավոր հետևանքների մասին:

Ջրային բնագավառում տեղեկատվություն ստանալու համար յուրաքանչյուր ոք իրավունք ունի դիմել համապատասխան մարմին և 30 օրվա ընթացքում ստանալ պատասխան, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Ջրային բնագավառում տեղեկատվության տրամադրման կարգը հաստատում է կառավարությունը:

Հոդված 106.

Հասարակական կազմակերպությունները և քաղաքացիները կարող են

մասնակցել ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի հետ կապված հարցերի քննարկմանը և ներկայացնել առաջարկություններ:

Պետական կառավարման լիազորված մարմինները ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի պահպանության միջոցառումներ իրականացնելիս իրավունք ունեն քննարկել հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ներկայացված առաջարկությունները:

[ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք](#)

Հոդված 60.6.

10. Ազդակիր համայնքների բնակչությունը պետք է մասնակցելու հնարավորություն ունենա արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման ու վերանայման գործընթացներին: Սույն մասով նախատեսված գործընթացներին մասնակցելու նպատակով արտակարգ իրավիճակների լիազոր մարմինը ազդակիր համայնքի բնակչությանը տեղեկացնում է համապատասխան աշխատանքների իրականացման մասին՝ տրամադրելով տեղեկություններ որոշումների կայացման գործընթացին

մասնակցելու ընթացակարգի և այն լիազոր մարմինների մասին, որոնց կարող են ներկայացվել դիտողություններ և հարցեր: Ազդակիր համայնքների բնակչությունը պետք է ունենա ողջամիտ ժամկետներում առաջարկություններ ներկայացնելու հնարավորություն, և համապատասխան որոշումներ կայացնելիս պետք է հաշվի առնվեն ազդակիր համայնքի բնակչության ներկայացրած

առաջարկությունները:

[«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք](#)
Հոդված 26.

1. Հանրության իրազեկումն ու մասնակցությունն ապահովելու նպատակով գնահատումների և փորձաքննության գործընթացները ենթակա են հանրային ծանուցման և քննարկման:

2. Հանրության ծանուցումն իրականացնում են՝

1) լիազոր մարմինը՝ ձեռնարկողի ներկայացրած հայտի, հաշվետվությունների և փորձաքննական եզրակացության նախագծի մասին՝ լուումներից առնվազն 7 աշխատանքային օր առաջ.

2) ձեռնարկողը՝ հիմնադրության փաստաթղթի և նախատեսվող գործունեության ու դրանց ազդեցության գնահատումների գործընթացների իրականացման մասին՝ լուսմներից առնվազն 7 աշխատանքային օր առաջ.

3) ազդակիր համայնքի տարածքային կառավարման մարմինները և համայնքի ղեկավարը՝ հիմնադրության փաստաթղթի և նախատեսվող գործունեության ու դրանց ազդեցության գնահատումների գործընթացների իրականացման մասին՝ լուսմներից առնվազն 7 աշխատանքային օր առաջ:

3. Ծանուցման բովանդակությունը պարունակում է ձեռնարկողի մասին տվյալները, հիմնադրության փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության համառոտ նկարագրությունը, իրականացման վայրը, դրանց հետ ծանոթանալու և քննարկումների իրականացման վայրը, պայմանները, դիտողություններ ու առաջարկություններ ներկայացնելու ժամկետները և այլ տեղեկություններ:

4. Ծանուցումը, հիմնադրության և նախագծային փաստաթղթերը

տեղադրվում են նաև լիազոր մարմնի պաշտոնական կայքում՝ լսումներից առնվազն 7 աշխատանքային օր առաջ:

5. Հանրային քննարկումներն իրականացնում են՝

1) ձեռնարկողը՝ հիմնադրության փաստաթղթի, նախատեսվող գործունեության և դրանց ազդեցության գնահատման գործընթացների մասին.

2) պետական կառավարման տարածքային մարմինը, ձեռնարկողը՝ հիմնադրության փաստաթղթի և դրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության նախագծի մասին.

3) տեղական ինքնակառավարման մարմինը, ձեռնարկողը, նախատեսվող գործունեության և դրա ազդեցության գնահատման հաշվետվության մասին:

6. Լիազոր մարմինը քննարկումներում ապահովում է իր ներկայացուցչի մասնակցությունը:

7. Հանրային քննարկումների արդյունքում իրականացնողը կազմում է համապատասխան արձանագրություն՝ կցվում է տեսաձայնագրությունը:

8. Հանրության հիմնավորված դիտողությունները և

ատաջարկությունները ձեռնարկողը և լիազորված մարմինը պետք է հաշվի առնեն: Հաշվի չառնելու դեպքում տրվում են հիմնավոր պատճառաբանումներ:

9. Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

«Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք

Հոդված 10.

Քաղաքացիներն ունեն՝

3) պետական մարմինների՝ բնակչության

սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանը վերաբերող որոշումների և ծրագրերի մշակմանը, քննարկմանն ու ընդունմանը, սահմանված կարգով, մասնակցելու և դրանց իրականացումը վերահսկելու իրավունք.

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

Հոդված 11.

1. Սույն օրենքի իմաստով՝ համայնքի բնակիչների մասնակցությունը **տեղական ինքնակառավարմանը** սահմանվում է որպես համայնքում

իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են **տեղական հինքնակառավարման** մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ **տեղական հինքնակառավարման** մարմինների որոշումների վրա:

2. Համայնքում **տեղական հինքնակառավարմանը** օրենքով սահմանված կարգով մասնակցելու իրավունք ունի տվյալ համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:

3. **Տեղական հինքնակառավարմանը** համայնքի բնակիչների մասնակցությունը կարող է տեղի ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված՝ **տեղական հինքնակառավարման** մարմինների իրավասությունների շրջանակներում, նրանց գործունեության բնագավառներում:

4. **Տեղական հինքնակառավարմանը** բնակիչները կարող են մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ հասարակական միավորումների և քաղաքացիական

նախաձեռնությունների միջոցով:

5. 3000 և ավելի բնակիչ ունեցող

համայնքը պետք է ունենա պաշտոնական համացանցային կայք, որի ստեղծումն ու վարումն ապահովում է համայնքի ղեկավարը՝ սույն օրենքով և համայնքի ավագանու սահմանած կարգով:

Հոդված 37.

1. Համայնքի ղեկավարը **տեղական ինքնակառավարմանը** բնակիչների մասնակցության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու **տեղական ինքնակառավարման** մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքում հասանելի որևէ ձև կամ միջոց (այդ թվում՝ տեղեկատվության և հեռահաղորդակցության).

2) ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ այդ միջոցառումներին մասնակցելու ցանկություն հայտնած

		<p>համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար.</p> <p>3) կազմակերպում է տեղական ինքնակառավարման առնչվող օրենսդրական և ենթօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լուսմներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին.</p> <p>4) համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում կամ ներգրավում է համայնքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում:</p>			
6.	Հասարակական	«Բնակչության			

վերահսկողության
իրավունք

սանիտարահամաճարակային
անվտանգության ապահովման
մասին» ՀՀ օրենք

Հոդված 10.

Քաղաքացիներն ունեն՝

3) պետական մարմինների՝
բնակչության

սանիտարահամաճարակային
անվտանգության ապահովմանը
վերաբերող որոշումների և
ծրագրերի իրականացումը
վերահսկելու իրավունք.

Հոդված 25.

Հասարակական ու հասարակական-
քաղաքական
կազմակերպությունները, ինչպես
նաև քաղաքացիների առանձին
խմբերը իրավասու են, Հայաստանի
Հանրապետության օրենսդրության
շրջանակներում, հասարակական
վերահսկողություն իրականացնել
Հայաստանի Հանրապետության
սանիտարական օրենսդրության
պահպանման և
սանիտարահամաճարակային
անվտանգության ապահովման
բնագավառում՝ արդյունքների
մասին տեղեկացնելով Հայաստանի
Հանրապետության պետական
հիգիենիկ և հակահամաճարակային
ծառայությանը:

7. Պաշտպանության
իրավունք

ՀՀ Սահմանադրություն

Հոդված 50.

1. Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Հոդված 52.

Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների խախտման դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի

աջակցությունը ստանալու
իրավունք: Մանրամասները
սահմանվում են օրենքով:

Հոդված 61.

1. Յուրաքանչյուր ոք ունի իր
իրավունքների և ազատությունների
արդյունավետ դատական
պաշտպանության իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք, Հայաստանի
Հանրապետության միջազգային
պայմանագրերին
համապատասխան, ունի իր
իրավունքների և ազատությունների
պաշտպանության խնդրով մարդու
իրավունքների և ազատությունների
պաշտպանության միջազգային
մարմիններ դիմելու իրավունք:

Հոդված 63.

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և
անաչառ դատարանի կողմից իր
գործի արդարացի, հրապարակային
և ողջամիտ ժամկետում քննության
իրավունք:

[ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և](#)

[ՀԻՄՆԱՐԱՐ](#)

[ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ](#)

[ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ](#)

[Կոնվենցիա ՓՈՓՈԽՎԱԾ 11-ԸՂ](#)

[ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ](#)

Հ ո դ վ ա ծ 6

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում
են նրա քաղաքացիական
իրավունքներն ու

պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

[ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ](#)

[ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ](#)

[ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐ](#)

[ԸՆԴՈՒՆԵԼՈՒՆ](#)

[ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ](#)

[ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ և](#)

[ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ](#)

[ՄԱՏԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ](#)

Կոնվենցիա /Օփուս/

Հոդված 9

«1. Յուրաքանչյուր Կողմ իր ազգային օրենսդրության շրջանակներում ապահովում է, որ յուրաքանչյուր անձ, որը համարում է, որ հոդված 4-ի պայմաններին համապատասխան տրված տեղեկություն ստանալու իր խնդրանքն անտեսվել է կամ ապօրինի մերժվել, լինի դա մասամբ, թե ամբողջությամբ, չի բավարարվել պատշաճ ձևով, կամ եթե մի այլ առնչությամբ այդ խնդրանքի նկատմամբ ցուցաբերվել է մոտեցում, որը չի համապատասխանում նշված հոդվածի դրույթներին, մուտք

ունենա քննության ընթացակարգին դատարանում կամ օրենքի համաձայն հիմնված մեկ այլ անկախ և անկողմնակալ մարմնում: Այն դեպքերում, երբ նախատեսվում է որոշման այդպիսի քննություն դատարանում, Կողմը ապահովում է, որ այդ անձը մուտք ունենա նաև դեպի օրենքով սահմանված արագ ընթացակարգ, որը չի պահանջում կամ պահանջում է նվազագույն վարձատրություն՝ դատարան չհանդիսացող պետական մարմնի կամ անկախ ու անաչառ մարմնի կողմից վերաքննության համար: 1-ին կետին համապատասխան՝ ընդունվող վերջնական որոշումները պարտադիր բնույթ են կրում տեղեկությանը տիրապետող մարմնի համար: Պատճառները ներկայացվում են գրավոր ձևով, առնվազն այն դեպքերում, երբ տեղեկություն տրամադրելու ինդրանքը մերժվում է սույն կետին համապատասխան:

2. Յուրաքանչյուր Կողմ իր ազգային օրենսդրության շրջանակներում ապահովում է, որ հասարակության համապատասխան ներկայացուցիչները, որոնք՝

- ա) ունեն բավականին շահագրգռվածություն կամ որպես այլընտրանքային տարբերակ,

բ) համարում են, որ տեղի է ունեցել այս կամ այն իրավունքի խախտում, եթե դա պահանջվում է համապատասխան Կողմի վարչական ընթացակարգային նորմերով,

մուտք ունենան դեպի դիտարկման ընթացակարգը դատարանում և/կամ օրենքի համաձայն հիմնված մեկ այլ անկախ և անաչառ մարմնում ընդունված ցանկացած որոշման, գործողության կամ անգործության օրինականությունը իրավական և ընթացակարգային տեսակետից վիճարկելու նպատակով, հողված 6-ի դրույթների և սույն Կոնվենցիայի այլ համապատասխան դրույթների պահպանման պայմանով և այնտեղ, որտեղ դա նախատեսված է ազգային օրենքներին համապատասխան և առանց վտանգելու ստորև բերված կետ 3-ը:

Բավարար շահագրգռության առկայությունը և այս կամ այն իրավունքի խախտումը որոշվում է՝ ելնելով ազգային օրենսդրության դրույթներից և շահագրգիռ հասարակությանը դեպի արդարադատություն, սույն Կոնվենցիայի շրջանակներում, լայն մուտք տրամադրելու նպատակից: Այս նպատակով վերը բերված

ենթակետ ա)-ի նպատակների համար բավարար է ցանկացած հասարակական կազմակերպության, որը համապատասխանում է հոդված 2-ի կետ 5-ում նշված պահանջներին, շահագրգռվածությունը: Այդպիսի կազմակերպությունը կարող է նմանապես իրավունք ունենալ հայտարարել իր իրավունքների խախտման մասին ըստ վերոհիշյալ բ) կետի:

[ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք](#)

Հոդված 16.

Անձն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր քաղաքացիական իրավունքների

ինքնապաշտպանության իրավունք:

Ինքնապաշտպանության

եղանակները պետք է համաչափ լինեն խախտմանը և դուրս չգան խափանման համար անհրաժեշտ գործողությունների սահմաններից:

[ՀՀ Հողային օրենսգիրք](#)

Հոդված 113.

Հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանությունը իրականացվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների հիման վրա՝

- 1) իրավունքի ճանաչմամբ.
- 2) մինչև իրավունքի խախտումը

			<p>գոյություն ունեցող վիճակի վերականգնմամբ և իրավունքը խախտող կամ խախտման համար վտանգ ստեղծող գործողությունների կանխմամբ.</p> <p>3) վիճահարույց գործարքի անվավեր ճանաչմամբ և առ ոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառմամբ.</p> <p>4) պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի անվավեր ճանաչմամբ.</p> <p>5) իր իրավունքների պաշտպանությամբ.</p> <p>6) վնասների հատուցմամբ.</p> <p>7) օրենքով նախատեսված այլ եղանակներով:</p>			
8.	Վնասի հատուցման իրավունք		<p><u>ՀՀ Սահմանադրություն</u> Հոդված 62.</p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:</p>			

ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք

Հոդված 12.

1. Քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև իրավունքն այլ ձևով չարաշահելը չի թույլատրվում:»

Հոդված 14. «Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝

- 1) իրավունքը ճանաչելով.
- 2) մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելով.
- 3) իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխելով.
- 4) առոչինչ գործարքի անվավերության հետևանքները կիրառելով.
- 5) վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելով և դրա անվավերության հետևանքները կիրառելով.
- 6) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտն անվավեր ճանաչելով.
- 7) դատարանի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին հակասող ակտը

չկիրառելով.

8) իրավունքի
ինքնապաշտպանությամբ.

9) պարտականությունը
բնեղենով կատարելուն
հարկադրելով.

10) վնասներ հատուցելով.

11) տուժանք բռնագանձելով.

12) իրավահարաբերությունը
դադարեցնելով կամ փոփոխելով.

13) օրենքով նախատեսված այլ
եղանակներով: **Հոդված 17.**

1. Անձը, ում իրավունքը իսխտվել է,
կարող է պահանջել իրեն
պատճառված վնասների լրիվ
հատուցում, եթե վնասների
հատուցման ավելի պակաս չափ
նախատեսված չէ օրենքով կամ
պայմանագրով:

Հոդված 18.

Պետական և տեղական
ինքնակառավարման մարմինների
կամ դրանց պաշտոնատար անձանց
ապօրինի գործողությունների
(անգործության)՝ ներառյալ
պետական կամ տեղական
ինքնակառավարման մարմնի՝
օրենքին կամ այլ իրավական ակտին
չհամապատասխանող ակտի
հրապարակման հետևանքով
քաղաքացուն կամ իրավաբանական
անձին պատճառված վնասները
հատուցում է Հայաստանի

Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

Հոդված 1058.

1. Քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Հոդված 1059.

1. Ապագայում վնաս պատճառելու վտանգը կարող է հիմք դառնալ վտանգ ստեղծող գործունեությունն արգելելու պահանջով հայցի հատուցման համար:

2. Եթե պատճառված վնասը հետևանք է շենքի, շինության շահագործման կամ այլ արտադրական գործունեության, որը շարունակում է վնաս պատճառել կամ սպառնում է նոր վնասով, դատարանն իրավունք ունի պատասխանողին պարտավորեցնել վնաս հատուցելուց բացի կասեցնել կամ դադարեցնել համապատասխան գործունեությունը:

3. Դատարանը կարող է մերժել համապատասխան գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին հայցը, եթե այն կասեցնելը կամ դադարեցնելը հակասում է պետական շահերին:

Նման գործունեությունը կասեցնելը կամ դադարեցնելը մերժելը տուժողներին չի զրկում այդ գործունեությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքից:

Հոդված 1063.

Քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով

(անգործությամբ)՝ ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ հրապարակելու հետևանքով, պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

Հոդված 1072.

1. Իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (տրանսպորտային միջոցների, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված

այլ գործունեության իրականացում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջը դատարանը կարող է նաև լրիվ կամ մասնակիորեն ազատել պատասխանատվությունից՝ սույն օրենսգրքի 1076 հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով:

Վնաս հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա:

Հոդված 1078.

1. Քաղաքացուն հաշմություն կամ նրա **առողջությանն** այլ վնաս պատճառելու դեպքում հատուցման ենթակա են տուժողի կորցրած աշխատավարձը (եկամուտը), որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ, ինչպես նաև **առողջության** քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերը՝ ներառյալ

բուժվելու, լրացուցիչ աննդի, դեղամիջոցներ ձեռք բերելու, պրոթեզավորման, կողմնակի ինամքի, **ատոդ** արանական-կուրորտային բուժման, հատուկ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու, այլ մասնագիտություն ձեռք բերելու համար ծախսերը, եթե պարզվել է, որ տուժողն ունի օգնության ու ինամքի նման տեսակների կարիք և չունի դրանք անվճար ստանալու իրավունք:

«Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք

Հոդված 10.

«Քաղաքացիներն ունեն՝
4) սանիտարական կանոնների խախտման հետևանքով իրենց առողջությանը հասցված վնասի փոխհատուցում ստանալու իրավունք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք

Հոդված 42.

Ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները, պաշտոնատար անձինք և քաղաքացիները մթնոլորտային օդի պահպանության վերաբերյալ

օրենսդրությամբ խախտված պատճառով և վնասը պարտավոր են հատուցել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ Անտառային օրենսգիրք

Հոդված 61.

1. Անտառային օրենսդրության խախտման, անտառային հողերը վնասելու, ինքնակամ զավթելու հետևանքով քաղաքացիների կամ իրավաբանական անձանց պատճառած վնասը ենթակա է հատուցման՝ օրենքով սահմանված կարգով:

2. Անտառային հողերի ինքնակամ զավթված տարածքները վերադարձվում են ըստ պատկանելության, առանց կատարված ծախսերի հատուցման:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք

Հոդված 16. Պետական արգելոցի պահպանության ռեժիմը

Պետական արգելոցի տարածքում արգելվում է՝

ա) ջրային ռեսուրսների օգտագործումը՝ ջրային համակարգերի միջոցով, և ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն.

բ) տնտեսական և բնակելի

օբյեկտների, ճանապարհների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի և հաղորդակցության այլ ուղիների շինարարությունն ու շահագործումը, բացառությամբ պետական արգելոցի գործունեության համար անհրաժեշտ օբյեկտների շինարարության (անտառապահի տնակ, արգելափակոց, սահմանանշան և այլն)։

գ) բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը.

դ) որսորդությունը, ձկնորսությունը.

ե) կենդանիների և բույսերի նոր տեսակների, կենսատեխնոլոգիաների միջոցով ստացված գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (տեսակների) ներմուծումը և օգտագործումը, ինչպես նաև առանձին տեսակների քանակի մեծացման կամ պակասեցման նպատակով տարվող որևէ աշխատանք.

զ) բույսերի, ծաղիկների, պտուղների և սերմերի մթերումը, բացի արգելոցի տարածքի գիտական հետազոտությունների համար նախատեսված հավաքածուների

հավաքից.

է) անտառահատումները, անասունների արածեցումը, խոտհունձը և բուսական ծածկույթի այլ խախտումներ, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի «դ» ենթակետում նշված դեպքերի.

ը) թունաքիմիկատների օգտագործումը բույսերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև հանքային պարարտանյութերի օգտագործումը.

թ) ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը և պահեստավորումը.

ժ) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները, որոնք առաջացնում են հողային ծածկույթի խախտում.

ժա) օգտակար հանածոների հանքավայրերի, երևակումների շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը.

ժբ) ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային

միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում.

ժգ) ցանկացած այլ գործունեություն, որը խախտում է բնական համակարգերը և օբյեկտները կամ սպառնում է դրանց պահպանությանը:

Հոդված 17. Ազգային պարկի պահպանության ռեժիմը

1. Հայաստանի Հանրապետությունում ազգային պարկի պահպանության ռեժիմն է՝ ազգային պարկի արգելոցային գոտում գործում է սույն օրենքի 16-րդ հոդվածով սահմանված ռեժիմը, իսկ արգելավայրային գոտում՝ սույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված ռեժիմը:

2. Ազգային պարկի ռեկրեացիոն գոտու տարածքում արգելվում է՝

ա) ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն.

բ) բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը.

գ) անասունների արածեցումը.

դ) բույսերի և կենդանիների նոր տեսակների, ինչպես նաև կենսատեխնոլոգիաների միջոցով

ստացված գենետիկորեն
ձևափոխված օրգանիզմների
(տեսակների) ներմուծման և
կլիմայավարժեցման
աշխատանքները.

ե) թունաքիմիկատների
օգտագործումը բույսերի
պաշտպանության նպատակով,
ինչպես նաև հանքային
պարարտանյութերի օգտագործումը.

զ) էկոլոգիապես վնասակար,
Հայաստանի Հանրապետության
օրենսդրությամբ սահմանված
թույլատրելի նորմերը գերազանցող
արտանետումներ և կեղտաջրեր
առաջացնող տեխնոլոգիաների
օգտագործումը.

է) ռադիոակտիվ նյութերի և
թափոնների, ինչպես նաև մարդու
ատոլոջության և շրջակա միջավայրի
համար վտանգավոր կամ թունավոր
այլ նյութերի արտադրությունը,
օգտագործումը և պահեստավորումը.

ը) երկրաբանական
ուսումնասիրության
աշխատանքները (հողային
ծածկույթի խախտումով), օգտակար
հանածոների հանքավայրերի,
երևակումների շահագործումը,
հանքանյութեր վերամշակող
օբյեկտների տեղաբաշխումը.

թ) անտառահատումները
(բացառությամբ սանիտարական և

խնամքի հատումների).

ժ) արդյունագործական նպատակով բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների և դրանց արգասիքների օգտագործումը.

ժա) ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում:

3. Ազգային պարկի տնտեսական գոտու տարածքում արգելվում է՝

ա) ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն.

բ) բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը.

գ) անտառահատումները (բացառությամբ սանիտարական և խնամքի հատումների).

դ) բույսերի և կենդանիների նոր տեսակների, ինչպես նաև կենսատեխնոլոգիաների միջոցով ստացված գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (տեսակների) ներմուծման և կլիմայավարժեցման աշխատանքները.

ե) թունաքիմիկատների օգտագործումը բույսերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև հանքային պարարտանյութերի օգտագործումը.

զ) էկոլոգիապես վնասակար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումների և կեղտաջրեր առաջացնող տեխնոլոգիաների օգտագործումը.

է) ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը, պահեստավորումը.

ը) ընդերքի շահագործումը պայթեցման միջոցով.

թ) հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը.

ժ) ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում:

4. Յուրաքանչյուր ազգային պարկի խնդիրները, գոտիավորումը և պահպանության ռեժիմի

առանձնահատկությունները սահմանվում են տվյալ ազգային պարկի կանոնադրությամբ:

Հոդված 18.

1. Հայաստանի Հանրապետությունում պետական արգելավայրի տարածքում արգելվում է ցանկացած գործունեություն, որը խախտում է արգելավայրի էկոհամակարգերի կայունությունը կամ սպառնում է **հատուկ** պահպանության կարիք ունեցող էկոհամակարգերի, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը:

2. Յուրաքանչյուր պետական արգելավայրի խնդիրները և ռեժիմի առանձնահատկությունները սահմանվում են տվյալ պետական արգելավայրի կանոնադրությամբ:

Հոդված 19.

1. Հայաստանի Հանրապետությունում **բնության** հուշարձանի զբաղեցրած տարածքում արգելվում է ցանկացած գործունեություն, որը սպառնում է դրա պահպանությանը:

2. **Բնության** հուշարձանի պահպանության ռեժիմը

սահմանվում է յուրաքանչյուր **բնության** հուշարձանի համար կազմված անձնագրով:

3. **Բնության** հուշարձանի անձնագիրը ընդգրկում է՝

ա) անվանումը և դասակարգումը.

բ) տեղադիրքը և աշխարհագրական կոորդինատները.

գ) նկարագրությունը, չափագրությունը և վիճակը.

դ) սահմանների և պահպանման գոտու նկարագրությունը, մակերեսը, քարտեզ-հատակագիծը.

ե) տվյալներ սեփականատիրոջ և հողօգտագործողի մասին.

զ) պահպանության և օգտագործման ռեժիմի առանձնահատկությունները.

է) տվյալներ պահպանությունն իրականացնող սուբյեկտի մասին:

Հոդված 20.

Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտում արգելվում է տնտեսական գործունեություն, որը կարող է սպառնալ այդ տարածքների էկոհամակարգերի կայունությանը, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, զիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների

		պահպանությանը:			
9.	Սեփական գործունեության իրականացման իրավունքը	<p><u>ՀՀ Սահմանադրություն</u> Հոդված 11. Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:</p> <p>Հոդված 59. 1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով: 2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով: 3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը,</p>			

			անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:			
10	Ազատ արտահայտվելու, բողոքի ակցիաների իրավունքը		<p><u>ՀՀ Սահմանադրություն</u> Հոդված 39. Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:</p> <p>Հոդված 42. 1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:</p> <p>Հոդված 44. 1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքների և ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք: 2. Բացօթյա տարածքներում</p>			

կազմակերպվող հավաքներն օրենքով սահմանված դեպքերում անցկացվում են ողջամիտ ժամկետում ներկայացված իրազեկման հիման վրա: Ինքնաբուխ հավաքների իրականացման համար իրազեկում չի պահանջվում:

Հոդված 53.

Յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

Հոդված 58.

1. Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք: Գործադուլի իրականացման կարգը սահմանվում է օրենքով:

2. Գործադուլի իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների

պաշտպանության նպատակով:
[ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և](#)

ՀԻՄՆԱՐԱՐ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՓՈՓՈԽՎԱԾ 11-ԸՂ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հ ո ղ վ ա ծ 10.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից:»

Հ ո ղ վ ա ծ 11.

«1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու,

ատողությունը կամ
բարոյականությունը կամ այլ
անձանց իրավունքներն ու
ազատությունները պաշտպանելու
նպատակով:

**«Հավաքների ազատության մասին»
ՀՀ օրենք**

Հոդված 6.

1. Հավաքներին մասնակցելու
իրավունք ունի յուրաքանչյուր ոք
(Հայաստանի Հանրապետության
քաղաքացիները, օտարերկրյա
քաղաքացիները և քաղաքացիություն
չունեցող անձինք):

2. Ոչ ոք իրավունք չունի
պարտադրելու անձին մասնակցել
որևէ հավաքի կամ խոչընդոտել նրա
մասնակցությունը որևէ հավաքի:

Հոդված 9.

1. Հանրային հավաք (այսուհետ՝
հավաք) անցկացնելու համար
կազմակերպիչը գրավոր իրազեկում
է լիազոր մարմնին, բացառությամբ
մինչև 100 մասնակից ունեցող, շտապ
և ինքնաբուխ հավաքների:

Հոդված 12.

1. Իրազեկումը կարող է
ներկայացվել հավաքի անցկացման
օրվանից ոչ ուշ, քան 7 օր, և ոչ շուտ,
քան 30 օր առաջ:

**Հոդված 26. Ինքնաբուխ և շտապ
հավաքները**

1. Ինքնաբուխ է որոշակի իրադարձությանը անմիջապես արձագանքելու նպատակով անցկացվող հավաքը (այսուհետ՝ ինքնաբուխ հավաք):

2. Շտապ է այն հավաքը, որը կազմակերպվում և անցկացվում է որևէ իրադարձությանը հրատապ արձագանքելու նպատակով և այդ նպատակին հնարավոր չէ հասնել իրազեկում ներկայացնելու ժամկետի պահպանման պարագայում (շտապ հավաք):

Հոդված 27.

1. Եթե ինքնաբուխ հավաքն ունի հավաքի անցկացման փաստացի կազմակերպիչ, ապա վերջինս պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել հավաքի անցկացման վայրի ոստիկանության ստորաբաժանմանը:

2. Շտապ հավաքի կազմակերպիչը պարտավոր է հավաքն անցկացնելուն ուղղված գործողություններ ձեռնարկելուց առաջ այդ մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին և ոստիկանությանը:

3. Ինքնաբուխ և շտապ հավաքները չեն կարող տևել վեց ժամից ավելի: